



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





NOV 20 1905

0-65

Թարգմանութիւն № 4

Ե. ՅԵՐԳՕՎ

# ՄԻ ԱՄԻՍ Կ.-ՊՕԼՍՈՒՄ

ԱՄԱՌԻԱՅ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

1005  
21369

1896

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 Հ.Ս.Ս.Ր.Ա. ԵՄ  
 7/XI-1922  
 ԿՈՄՍՈՒՆՆԱԿՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 ՄԱՍԿՈՎԱ

Թարգմ. Ե. Բ. Նալբանդեան



Տպարան «ՆԻՐԱԿ» Ալեքսանդրապոլ.

1905  
(29)

67.182



ՎԱՀԱԹԱԹԵՄ


ԲԱԳՐԱՏ ՎԱՐԳԱՊԵՏ

ԳԼՈՐԳ — ԹԵԻՆԶԵԼԵՆԻԻ

ԱՆՄՈՒՅ ՅԻՉԱՏԿԻՆ

ՆԻԷՐ ԹԱՐԳՄԱՆՉԻՅ.

Дозволено Ценз. С.-Петербургъ 10 Января 1905 г.



Երկամբ պատրիարք  
Մասրեսու աբեղիսկոպոս Իգմիրեան

## Մ Ի Ա Մ Ի Ս Կ . Պ Օ Լ Ս Ո Ւ Մ

### I.

Մտախոհ, պապիրոս պապիրոսի յետևից  
ծխելով, ես նստած էի հիւրանոցի լուսամուտի  
առաջ և զարձանում էի իմ առաջը տարածւած  
Կ.-Պօլսի տետրով: Ահա արդէն երկու շաբաթ է,  
որ ես օրէցօր նայում եմ այդ պատկերին և  
մինչև այժմ էլ չեմ հաւատում թէ դա իրականու-  
թիւն է և ոչ պատկեր, ոչ ճերանկներով մար-  
մնացած, ներշնչւած կրագ: Մանաւանդ այժմ,  
կրք սկսել են լուսնկայ գիշերները, հինօրեայ  
քաղաքի տետրն աւելի գիւթական, աւելի հիա-  
ցուցիչ էր: Փողոցի մի կողմը ձգւած էր բա-  
ղարային այգու բոլորովին մութ կանաչից  
կաղմւած խիտ պառք, որի մէջ այստեղ ու

այնտեղ փայլփլում էին գաղափրն լապտերները  
զօղզօջիւն լեղալինները, իսկ նրա յետևում ահա-  
զին թերութեամբ բարձրանում էր հարթ տա-  
նիրներով անվերջ տների ամֆիտէատրը: Սրա-  
ծայր մինարէներն և գեղեցիկ կիպարիտները  
քցել էին իրանց երկար շւարները, որոնք սև  
շերտերով տարածել էին փողոցների մէջ: Ոս-  
կեղջիւրի հարթ և անշարժ մակերևոյթն ար-  
ծաթի նման փայլում էր: Մեծ փայլուն աստ-  
ղերը ընթշուժեամբ շողշողում էին. իսկ լու-  
սինը, կարծես կրքից գունատւած, անընդհատ  
զւարճանում էր այս բաղաբով, որի գմբէթերի  
խաշերն էր նա շատ դարեր առաջ արծաթա-  
գօծում. իսկ այժմ նորա ճառագայթները ցո-  
լանում էին նոյն շինութիւնների գագաթները  
զարդարող կիսալուսնի մէջ:

Արևի մայր մտնելուց յետոյ օդը մի քիչ  
զովացաւ և ես տանջւած ու յոգնած ամառ-  
նային օրւայ օթթից ու ծանրութիւնից շնչում  
էի գմայլած: Այդ պատկերի խաղաղ գեղեցկու-  
թիւնն ակամայ ստիպեց ինձ երևակայութեանս  
մէջ պատկերացնել այն գոհունակութիւնն ու  
հանգիստը իմ առաջ տարածւած անհամար  
աների, որտեղ փայլիշահի մայրաբաղաբի աշ-

խառաւոր դասակարգը վաղուց արդէն հանգ-  
չում էր խորը քնով: Թւում էր, թէ այստեղ  
չէր կարող տեղ ունենալ ոչ դարձը, ոչ յու-  
սահատութիւնը և կեանքը սահում էր հան-  
դարտ, պատսպարւած նախասահմանութեան  
հմուտով: Ինչ էլ որ պատահելու լինի, շարժէ  
յուզել, որովհետև հազարաւոր տարիներ սրա-  
նից առաջ այդ արդէն գրւած է «Բաղբի գրքում»  
և դորա համար պէտք է խնարհել, խորա-  
մտութեամբ ծխելով կկկացող նարգիլէն կամ,  
մեղկացած փափուկ ու յարմար անկողնում,  
բաղբը նիրհել, անձնատուր եղած գառանցանք-  
ներին: Ամենափորձիկ քամի անգամ չէր շար-  
ժում օդի մէջ և ծուխը կանսնաւոր օղակնե-  
րով բարձրանում էր ու գանդող դուրս գնում  
լուսամուտից: Գոան անսպասելի հարւածն  
ստիպեց ինձ ցնցել:

—Ներս մտէր, ձայն տւի ես:

Բացւած դռան լոյսի մէջ երևաց հայ  
խմբագիր Մ ա Ր Ս ի\* ) ոչ մեծ, չոր մարմինը.

\*) Նորա իսկական ազգանունն է Մուրադեան, «Երևելքի»  
և Տփլիսի «Նոր-Գար» լրագրների մշտական աշխատակիցը: Բա-  
ցի դարանից նա աշխատակցում է հայկական շատ պարբերական  
հրատարակութիւնների:



նա երբեմն գալիս էր ինձ մօտ խօսելու և պատմելու այն ամենն, ինչ որ տանջում ու ստիպում էր արիւնով լցելու նորա հայկական սիրտը:

— Երևակայութեան էր անձնատուր եղիլ  
— հարցրեց նա, նստելով իմ գիմացը փափուկ ու յարմար բազկաթոռի վերայ:

— Ինչպէս տեսնում էք, մինչև անգամ մոմերը չեմ վառել, թէև հարկաւոր է մի քանի նամակներ գրել:

— Տեսնում եմ, որ արեւելեան ծուլութիւնը սկսում է նւաճել ձեզ — պատասխանեց նա ինձ և յանկարծակի վառւած լուցկին լուստուրեց նորա լղար, շիլայի և կենդանի, խոշոր աչրերով գէմքը, ծածկւած խիտ ու գանգուր մազերով:

— Ինչո՞ւ երկար ժամանակ է չէք երևում, հարցրի ես:

— Ես շրջում էի փոքրատիական ափում և, խոստովանում եմ, վերադարձայ հոգեկան ամենաստրտափելի դրութեամբ: Եւրոպական մամուլը շատ բիշ է հետաքրքրում այն ամենով, ինչ որ կատարւում է Եւրոպայի սահմաններից դուրս. նա բոլորովին անտեղեակ է այն սարսափ-

ներին, որոնք տեղի են ունենում այժմ հայկական այն գիւղերում, որոնց դուք ոչ մի բարեկէղի վրայ չէք գտնի:

«Երևակայեցէք, որ դուք, կեանքդ մի փոքր վտանգի ենթարկելով, ձիով երկար ճանապարհորդելուց ջարդւած, համնում էք վերջապէս մի գիւղ, և այնտեղ յայտնուէք հանգուանալու և խօսելու ձեր մայրենի չեղով: Գեռ ես երկու երեք վերստ հեռու դուք կարող էք մտածել այդ մասին, բայց ահա ձեզ հարւածում է խանձահոտը. ճանապարհին դուք պատահում էք ջարդւած սայլին, կողքին, մացառի մէջ, քնած է մի ինչ որ ձերուկ. բայց, ուշադրութեամբ դիտելով, դուք նկատում էք նորա պարանոցի լայն արիւնտտ շերտը, որը ստիպել է նորան ընդունել այդպիսի մի անբնական դիրք: Եւ բանի դուք առաջ էք շարժում, այնքան աւելի էք հանդիպում անհասկանալի բաների, որոնք ստիպում են ձեր սրտին համակել ահով ու վշտով: Մտրակում էք ձին, համնում էք հայկական գիւղը և այժմ դուք համապում էք, որ այնտեղ հէնց նոր «անտեսութիւն» են արել քիւրդերը: Կիսախանձւած դիակները գէպի երկինք բարձրացրած

ձեռքերով, խաշւած քահանաները, երեխայք  
ցանկապատի զցերի վերայ հանւած, կանայք,  
ամբողջ վաշտի զւարճութեան առարկայ լինե-  
լուց յետոյ, աննկարագրելի տանջանքների մէջ  
մեռած, այս բոլորն այնպիսի տեսարաններ  
են, որոնք չի կարելի մոռանալ, թէկուզ մի  
անգամ տեսնելով: Երբ ևս այստեղ վերադար-  
ձայ և իմ մօտիկ բարեկամների շրջանում պատ-  
մեցի այն ինչ որ տեսայ, հոսեցին, բառի բուն  
նշանակութեամբ, արցունքների հեղեղները և  
լուում էին անէծքներ:

—Ինչնով էք դուք բացաղբում թուրքերի  
այդպիսի ատելութիւնը դէպի հայերը—հար-  
ցրի ևս նորան:

—Ինձ թուում է դուք էլ—պատասխանեց  
Մարութը—սխալ հայեացքի էք թերւում, աշխա-  
տելով, որքան հնարաւոր է, գտնել երկու ազ-  
գերի ընդհարման պատճառը: Պա ապագայի  
գործ է, իսկ այժմեան խնդիրը սէտք է լինի  
այն, որ բոլոր այդ սարսափների առաջն առ-  
նելի, և դոցա վերջ գնելուց յետոյ սկսել զբաղ-  
ւել պատմական հետազօտութիւններով: Պէ՛հ,  
չի կարելի, պարսններ, որ XIX դարու վեր-  
ջում մի ազգ ոչնչացնէ միւսին ոչ թէ հաւա-

սարութեան կամ բարձր քաղաքակրթութեան  
ճանապարհով, այլ ուղղակի դանակի և ատրճա-  
նակի օգնութեամբ: Զի կարող պատահել, որ  
որևէ մէկը չգայ մեզ օգնութեան:

—Իսկ ձեր Լանդօնի հայկական կոմիտե-  
տը,—հարցրի ևս:

—Է՛հ, նրանից, բացի շարիքից, ուրիշ  
ոչինչ սպասել չի կարելի, որովհետև նա, ինչ-  
պէս երևում է, անգլիացիների ձեռքին խաղա-  
լիք է: Եթէ դուք այստեղ մնայիք աւելի եր-  
կար ժամանակ, այն ժամանակ դուք ինքներդ  
էլ գրանում կհամոզւէիք, այստեղ, մինչև ան-  
գամ Կ.-Պօլսում, անգլիական կառավարութիւ-  
նը որոնում է այնպիսի մարդիկ, որոնց առա-  
ջարկում է փող, որպէսզի նորա գրգեն ժողո-  
վրդին ապստամբելու և այս կատարում է  
յայտնի կերպով. անգլիական գրդիչները մինչ  
իսկ նեղութիւն չեն կրում թաքցնել այն, որ  
նորա ամենին չեն կարեկցում հայերին, այլ  
գրգուելով նոցա, օգնում են Թիւրքիային, տա-  
լով նորան բարեյաջող պատճառ միւս պետու-  
թիւնների առաջ կատրել այն անձնաւորու-  
թիւններին, որոնք չեն ցանկանում ենթարկւել  
կառավարութեան կարգադրութիւններին: Միւս

կողմից, իրենք հայերն էլ, գուցէ, ձեռնադրու-  
թեան հայեցակէտից ոչ միշտ հնազանդ են  
իշխանութեան կարգադրութիւններին. և այդ  
նրանով է բացատրուում, որ դէպի այդ իշխա-  
նութիւնը նորա շին տաժում ամենափոքր յար-  
գանք անգամ: 78 թիւն, հէնց անմիջապէս  
Ռուս-Թուրքական պատերազմից յետոյ, հայե-  
րին տրւեց ինքնավարութեան մի բանի արտա-  
նութիւններ, գտնեալ նոցա կրօնական գործե-  
րի սահմանում, որտեղ, բոլորովին բնական է,  
կրօնների տարբերութեան տեսակէտից, կառա-  
վարութեանը անյարմար էր խառնել: Հիմնեց  
կրօնական ժողով, որի պարտականութիւնն էր  
պատրիարքի ընտրութիւնը: Եւ մինչդեռ այդ  
ժողովի անգամները զբաղւած էին այդ հար-  
ցով, սուլթանը նշանակեց Նուրեանին, որը  
խիական ազաջոյց է այն բանի, թէ տրւած  
իրաւունքները խլւած են և մենք նորից գրտ-  
նուում ենք 70-ական թուականների գրութեան  
մէջ: Եղան համարձակ մարդիկ, որոնք վճռե-  
ցին հարցմունք անեղ կառավարութեանը. գրան  
նա պատասխանեց թէ՛ իշխանութեանը հնա-  
զանգեղութեան խանդարման պատճառով նա պատ-  
ժում է իւր հպատակներին, ինչպէս որ կպատ-

ժէր թուրքերին, եթէ նորա հնազանգէլին  
կառավարութեան հրամանին: Մենք մեզ պզում  
ենք այնպիսի յուսահատ գրութեան մէջ, որ  
գրականապէս գլուխներս կոբրցել ենք. իսկ  
այդ գուցէ ստիպում է մեզ անեղ նորանոր  
սխալներ:

— Բայց հայերը—հարցրի ես—ձեզ չեն  
սխալում:

— Փութ ինձ հարցնում էր հարուստ հա-  
յերի մասին: Իհարկէ ոչ: Չի կարելի մեզադրել  
մեր ազգայնութեանը, որ հայրենատիրութիւնը  
օրէցօր ընկնում է: Եւ վերջապէս հարուստները  
իրենց վերայ չեն կրում թուրքական լծի ամ-  
բողջ ծանրութիւնը, որովհետեւ Բարձր-Պրան  
ամեն մի ճնշումից նորա կարող են դուրս  
պրծնել փոզով: Վերջապէս թուրքերը գործը  
այսպիսի ճարպիկութեամբ են գլուխ բերում.  
նոքա խիական կատարածը յանձնել են ջիւր-  
գերին, մի ցեղի, որը յայտնի է իբրև փայրնի,  
աւազակաբարոյ ժողովուրդ. և նոցա օգտակար  
գործունէութեան համար սուլթանը նոցանից  
կազմակերպում է գնդեր և վարձատրում է  
փողով:

Եթէ դուք ցանկանում էք գիտնեալ մօ-

տաւորապէս սրբան հայեր են ջարդած Փոքր  
—Ասիայի տասներկու վրայեթմներում, ես չեմ  
կարող յանձն առնել ձեզ իտիական թուրք ցոյց  
տալ, բայց կանւանեմ մի քանի կէտեր և մատ-  
նացոյց կանեմ մօտաւորապէս նոցա գոհերի  
քանակութիւնը: Անտ օրինակ՝ Տրապիզոնում  
սպանուել են 520 մարդ թուրքական եղջիւրի  
նշանով և ջարդին վերջ տրւեց նոյնպէս եղջիւ-  
րի ձայնով և այդ սարսափների ընթացքում  
հայերից խուսեց 5 միլիոն ֆրանկի կարողու-  
թիւն: Երզրումում սպանուել են 400 հայ, Բայ-  
բուրում 1350, Երզնկայում հարիւրաւորներ,  
175 գիւղերում բոլոր արական սեռը, Գիգի-Բա-  
յաղէզում 500 մարդ, Բիթլիսում—800, Սա-  
սունում—800, Վանում և Խարբուզում—  
500-ական, Երարկերում—2800, բացի դարա-  
նից շրջակայ հայաբնակ գիւղերում չի մնացել  
ոչ մի կենդանի մարդ. Սվազում ջարդուել են  
մէկ ու կէս հազար, Գիւրիւնում—հազար մար-  
դուց աւելի, Չարկնում աւելի քան երեք հա-  
զար, Ամասիայում—հազար հոգի, և Էնթա-  
զում—հազար մարդ...

—Սպասնցէր, ընդհատեցի ես իմ խօ-  
սակցին—բայց դուք առաջ էք բերում այն-

պիտի ահագին թուրք, որին պէտք է նաև հա-  
մապատասխանէ յարձակողների թիւը. ան-  
կտակած պէտք է լինեն կանոնաւոր կազմա-  
կերպւած զեզեր. և, վերջապէս, ինչո՞ւ ժողո-  
վուրդը դրականապէս ոչ մի գիմադրութիւն  
չէր ցոյց տալիս. այդ երևում է այն բանից,  
որ թուրքերի կամ քիւրդերի մէջ ոչ մի վիրա-  
ւոր կամ սպանւած չկար:

Իմ խօսակիցը դրան պատասխանեց հե-  
տևեալը:

—Նախ և առաջ—ասաց նա—մենք ոչինչ  
չգիտենք, թէ թուրքերի մէջ կան սպանւած-  
ներ կամ վիրաւորւածներ, սրովհետև, անկա-  
կած, այդ խիստ ճարպիկութեամբ ծածկու-  
ել. և երկրորդ, դուք բոլորովին ճիշտ նկատե-  
ցիք, որ հայ քաղաքների և գիւղերի վերայ  
յարձակելու համար անհրաժեշտ են կանոնա-  
ւոր կազմակերպւած զեզեր. այդպիսիները  
իհարկէ գոյութիւն ունեն և նոցա կազմակեր-  
պում է ինքը կառավարութիւնը՝ քիւրդերից  
զեզեր հիմնելով: Հեռուն չգնանք, հէնց երեկ  
մեծ Քայրամ Լ.բ, ուրիշ խօսքերով Մահամբի  
ճենդեան օրը, և սուլթանը, ընդունելով բոլոր  
փոքր-ասիական քիւրդերին, ասաց, որ նա

զս է նոցանից և կազմում է նրանցից նոր  
գունը, պարզ է, ՚ի վարձատրութիւն նոցա,  
յօզուտ թիւքթիայի, գործունէութեան: Ի հաս-  
տատութիւն այն բանի, որ թուրքական իշ-  
խանութիւնները շեն խազագայնում անկար-  
գութիւնները, այլ ընդհակառակը ձգտում են  
նոցա տարածել, հարկաւոր է մի ակնարկ բցել,  
թէ ինչպէս են նշանակում նահանգապետները,  
թուրքերէն վալի, հետու նահանգներում: Պէտք  
է ձեռք ասել, որ ապրուստը Կ.-Պօլսում չափա-  
հանց թանկ է, մասնաւորապէս թուրք արխ-  
տոկրատիայի համար, որովհետեւ նոցա գիրքը  
պահանջում է պահել տնտեսական հարեմ և մեծ  
բանակութեամբ ծառաներ: Ասուած մի արաս-  
ցէ, թէ որ այդ բանին աւելանայ սուլթանի  
առանձին ուղարձածութիւնը, որը արտայայտ-  
ւում է իւր սանուհիներից մէկին նորան կնու-  
թեան տալով: Յինեկով Երզրդ-Քեօսկում ունե-  
ցած իւր կապերի վերայ, այդպիսի կինը միև-  
նոյն ժամանակ ընդունակ է վասնելու ամե-  
նամեծ հարստութիւններ և ամուսնուն հաս-  
ցնում է վերջապէս այն տեղը, որ նա սկսում  
է միջնորդել իրեն տեղ տալ հեռաւոր գաւառ-  
ներում: Այդ բանը գլուխ է բերում հետևեալ

1005  
21362

կերպով, տեղական մեկնումէկ հայից նա պարտք  
է վերցնում 15—20 հազար լիրայ (սակի) և  
այդ տալիս է իրեն կաշառ սուլթանի մտերիմ-  
ներից մէկին: Պաշտօնն ըստանձնելով, նա ճա-  
նապարհ է ընկնում գլուխ խուլ գաւառը, սր-  
տեղ հէնց իսկոյն պէտք է հիմնէ իրեն համար-  
նոր հարէմ և նոր ծառաներ, որովհետեւ նորա  
կինը ոչ մի պայմանով չի հեռանայ Կ.-Պօլսից:  
Երևակայեցէք այժմ նորա դրութիւնը, նա այժմ  
ստիպւած է մի տուն պահել Կ.-Պօլսում, մի  
ուրիշը գաւառում, և միևնոյն ժամանակ վճա-  
րել պարտքի տոկոսները, իսկ գուր գիտէք,  
որ այստեղ ոչ մի վաշխառու տարեկան  
60%-ից պակաս չի վերցնում: Պարզ է, որ  
ոչ մի արդիւնք չի կարող բաւականացնել նո-  
րան, և նա հարկադրւած է սրտնել եկամուտի  
նոր աղբիւրներ: Գորա համար նա հազարդում  
է Ստամբուլ, որ այս ինչ հայկական գիւղը չի  
կատարում նորա պահանջները: Ստամբուլից  
նրան հրաման են ուղարկում վերցնել նիզամ-  
ներին, այսինքն հետեակ զօրքը և գնալ հա-  
գանդեցնելու նոցա: Հեշտ է երևակայել խո-  
ղազ ապրող հայերի զարմանքը, որովհետեւ  
վին յանկարծակի, նոցա գլուխ



է թիւրքական զօրքի օղակով, իսկ վալին մե-  
զաբուում է նոցա իբրև ապրտածրների և հրա-  
մայում է բոլոր արական բնակիչներին չլիժա-  
ներով կապկալել: Լաւ ճանաչելով թուրք առ-  
տիճանաւորներին, հայերը հասկանում են, որ  
այդ բոլորը փողի համար է և Սուլթանին  
փրկանք են վճարում: Սուլթանն իհարկէ այդ  
փրկանքը չի ստանում, այլ վալին է սեփակա-  
նացնում և այդպիսով էլ գործը վերջանում է:  
Փողը վճարելուց յետոյ, հայերը հետաքրքրու-  
ում են խմանալ, նոյն է արդեօք ամբաստանել  
իրենց և զգանքով լսում են, որ այդ արել են  
իրենց պրացիները, թիւրքերը: Գեռ ևս հետևակ  
զօրքի բարձրացրած փոշին շքրւած, և վալիի  
մարմինը սպիտակ ձիւ վերայ հօրիզոնում  
չանլայտացած, հայերն արդէն ոտքից գլուխ  
զինւած ճանապարհ են ընկնում վրէժ առնե-  
լու թիւրքերից և յետ խելու այն, ինչ որ նո-  
քա վճարել են պաշտօնեաներին: Գործը վեր-  
ջանում է կոտորածով և նոցա հաշտեցնելու  
գալիս է դարձեալ նոյն վալին. այս անգամ  
նա վերցնում է նոր փրկանք, իբր վարձատրե-  
լու թիւրքերին, հայերի յարձակման փոխարէն:  
Այսպէս ուրեմն պարզ է, որ ինչքան շատ պա-

տահնն նորա շրջանում անկարգութիւններ,  
այնքան կրաղմանան նորա արդիւնքները: Եւ  
ամենափոքր կայծը նա աշխատում է փշել և  
դարձնել տհազին բոց:

—Արդեօք ինչո՞վ պէտք է վերջանան այս  
բոլորը, հայերի կարծիքով:

—Չեմ կարող պատասխանել ձեր այդ  
հարցին, բայց կարծում եմ, որ դորա վաղձանը  
խիստ ծանր կլինի:

—Ո՞ւմ համար:

—Ո՛չ միայն հայերի, այլ և Եւրոպայի  
համար:

—Բայց ինչպէս Եւրոպայի համար, — հար-  
ցրի ես իմ խօսակցին:

—Չգտելով հասնել և իրազօրծել այս  
կամ այն քաղաքական խնդիրները, Ռուսաց  
քաղաքագէտները բոլորովին աշրածող են  
անում, որ Թիւրքիան նրա հետ հարևան եր-  
կիր է, իսկ Եւրոպական դիպլոմատները — որ  
նորա գործ ունեն Երևելքի բնակիչների հետ:  
1896 թվին Ֆրանսիական ամուսնութեան  
մէկի էջերում յայտնեց մի յօդւած, որի մէջ  
ապացուցւած էր, թէ Եւրոպայի քաղաքակրթ-  
ութիւնը, մազից է կախւած, որն անմիջա-

կան կախումն ունի Ասիայից: Կործես բազմը  
գիտամար այնպէս է կարգադրել, որ այն ամե-  
նը ինչ որ մեզ, երոպացիներին համար վնա-  
սաբեր է, հեռաւոր Ասիայի համար օգտակար  
է փողի տեսակէտից: Մեզանում հիմնական  
մետադր—ոսկին է, Ասիայում—արծաթը: Ոս-  
կին օրէցօր թափանում է, ուրիշ խօսքով  
ասած, միննոյն քանակութեամբ ոսկուն տա-  
լիս են աւելի ու աւելի մեծ քանակութեամբ  
արծաթ, հետեապէս, միննոյն քանակութեամբ  
ապրանքի համար Արևելքի բնակիչն այժմ  
ստանում է աւելի քան առաջ: Սորանով է  
բացատրւում հնդկական ազգային արդիւնաբե-  
րութեան ուղղակի առատակիական զարգացու-  
մը, որն ստիպում է անպլուպիներին բոլոր-  
վին լարջ կերպով խորհել: Միննոյն ժամա-  
նակ ի նկատի ունեցէք աշխատաւոր ձեռքերի  
քանակութիւնը, ապրուստի յարմար պայման-  
ները հրաշայի կլիման, դարերով սնւած ժա-  
ռանգական շափաւորութիւնը, ամրացած նան  
կրօնի պահանջներով, և դուր կհասկանաք, որ  
կուել այդ բանում Արևելքի հետ հեշտ չէ: Բո-  
լոր նորան հետազօտողները գալիս են այն ան-  
հերքելի եզրակացութեանը, որ իսկապէս հէնց

այնտեղ է թագնւած աւելի ու աւելի հասու-  
նացող համաշխարհային սօցիալական հարցե-  
րի բանալին: Եւ մինչդեռ մենք խնամք ենք  
տանում զարգացնելու մեր աշխատանքը, մինչ  
մեզանում հիմնում են ընկերութիւններ, ար-  
հեստն առաջ է գնում արագ քայլերով, գոր-  
ծարանները հասնում են հսկայական դրու-  
թեան, կարող է հասնել այն օրը, երբ մերե-  
նաները կանգ կառնեն, որովհետեւ ապրանքնե-  
րի համար չեն լինի վաճառանոցներ, և աւի-  
ական արդիւնաբերութիւնը, հետեապէս և քա-  
ղաքակրթութիւնը, աշխարհի երեսից կորէ  
Եւրոպայի սկսած ամբողջ գործը: Սորանով ես  
ուզում եմ ասել, որ Արևելքի նիւթական և  
դրամական դրութիւնը այնքան էլ վատ չէ,  
ինչպէս սովորաբար կարծում են: Այստեղ դեռ  
չէ զարթնել վստահութեան ոգին, այստեղ  
բաւականանում են փոքր տոկոսով և փոքր  
վաստակով, բայց թէ ամեն տեղ պառկած են  
սարսափելի դրամագլուխներ—գորանում ոչ մի  
կասկած չկայ: Տիրապետելով ամբողջ աշխար-  
հին, Եւրոպան ոչ մի ժամանակ այդ գործում  
չմտցրեց կրօնի տարբերութեան հարցը, և  
նոյն ինքը, բրիտաննութիւնը նրան պարտա-

ւորեցնում էր սիրել մարդկանց և ձգտել այն բանին, որպէսզի աստիճանաբար փափկացնելով նոցա սիրաբ, ստիպէ վերջապէս հաւատարմացնալով ինչ է կազմում իհարկէ Ամերիկան, բայց նա ոչ մի յարաբերութիւն չունի հետաւոր Արևելքի հետ: Այն ինչ մահամեղականի համար ամենից առաջ կրօնի խնդիրն է. նա, կեանքի և գծարութիւնների բոլոր բուսականներին, գիտնում է մոլորակին. որը թուրքիայի բոլոր գծարագութիւններն անպատճառ բացատրում է գեաւուրների տիրապետութեամբ, գրանից պարզ հետևում է, թէ նոցա ջնջելով — կգայ ոսկէգարը: Միևնոյն ժամանակ, թուրքիայի երիտասարդ սերնդի խմբերից մէկը ձգտում է վերականգնել ամբողջ անցեալը և գառնալ Մահամեղի ժամանակներին, որը տիրապետեց Վ.Պօլսին: Դորա ոսկէգարը տեսնում են անցեալի մէջ:

— Համարեա մեր սլաւօնամոյսի սլաւոնկապեցի ես:

— Տեսականապէս — այն, բայց միևնոյն ժամանակ կրօնական բազի տակ: Սլաւոնամոլութիւնը իրեն պայման չի դնում ցեղական հիմունքներն և յայտնում է իրբն պտուղ մի

առանձին խմբակի տեսական դատողութիւններին. այն ինչ սովորական իրենց կողմն են գրաւել ինչպէս ժողովրդի, այնպէս և հոգևորականութեան համակրանքը: Նայեցէր սովորացի մաշյ գէմբին, երկար խալովթը հագնէ, մոխրագոյն գլխարկը գլխին և գուր կհամոզւէր թէ ինչպէս նա ատում է ամբողջ ներկան և նորա աչքերը կրակով վառում են միայն անցեալի յիշողութիւններով: Այդ կուսակցութիւնն, անկատակած, մեծ դեր է խաղում Թուրքիայի պատմութեան մէջ:

— Իսկ երիտասարդ Թուրքիան:

— Բան չունէր — ժպտաց Մարտը — նոցա աւելի շատ ստեղծել են կրօնական լրագրանքը, բան իսկապէս գոյութիւն ունեն: Վերջապէս նոցա պահանջները ոչ մի սկզբունքի բնատրութիւն չունեն, այլ ուղղակի անձնատրութեան խնդիր է: Նորա ոչնչով հակառակ չեն Թուրքիայի արդի ուղղութեանը, այլ նոցա գուր չի գալիս Սուլթանը և հետևապէս, նորա մահից կամ գահազուրկ լինելուց յետոյ, նորա պէտք է չքանան և ձուլեն ընդհանուր զանգաւածի մէջ: Նոցա միւս պահանջը — բանալ բարձրագոյն զպրօցներ, միշտ կարող է կս-



տարւել—և ահա ներքին քաղաքականութեան  
աններգաշնակութիւնը գեղեցիկ վախճան կու-  
նենայ:

«Ես հեռացայ մեր սկսած խօսակցութիւ-  
նից, և այդ պատճառով նորից նրան եմ վե-  
րագումուծ: Ես ուզում եմ ապացուցանել, որ  
հաստատուն դրամական ապահովութեան ժա-  
մանակ վտանգաւոր է Իսլամի ներկայացուցիչ-  
ներին մէջ կրօնական մոլեռանդութիւն գործե-  
ցնել, որը կարող է խիստ բորբոքել հայկա-  
կան արիւնի հոտարները տեսնելով: Պատմու-  
թեան մէջ բոլոր մեծ փոփոխութիւններն այդ  
կերպ են սկսել և, դուցէ, այսպէս ասած,  
հայկական անկարգութիւնները ոչ այլ ինչ են,  
եթէ ոչ առաջին, Մարգարէի կանաչ դրօշակի  
հազիւ նկատելի շարժումը, որը, Աստուծ մի  
արասցէ, պարզի: Այդ խի պատճառով Եւրո-  
պան պէտք է հենց այժմեանից ձեռնարկի  
հռանդան միջոցների և վերջ տայ այս բոլորին:

—Բայց ինչպէս—հարցրի ես:

Մարտը ուսերը վեր քաշեց:

—Քրան ես սշնչով չեմ կարող պատաս-  
խանել, որովհետեւ դա քաղաքագէտների անձ-  
նական արժանիքների գործն է:

Քաղաքային այգուց յանկարծակի լուսդ  
վայրի ուրախ ու յափշտակիչ եղանակը սփ-  
պեց մեզ ընդհատել խօսակցութիւնը: Այնու-  
հետեւ մի քիչ ժամանակ էլ Մարտը նստած էր  
ինձ մօտ, խի յետոյ անյայտացաւ նայալէս  
արագ, ինչպէս ներս էր մտել: Ես գուրս նա-  
չեցի լուսամտից և դարձանում էի հարիւ-  
րերորդ գուցէ և հազարերորդ անգամ փազի-  
շահի հանգստացող մայրաքաղաքի պատկերով:

## II

Անցաւ մի քանի օր: Բաղն ինձ տւեց  
այնպիսի գէպրեր, որով ես կարողացայ աւելի  
խօրը թափանցել Հայկական հարցի մէջ և խօ-  
սակցել այնպիսի անձնաւորութիւնների հետ,  
որոնք կարող են համարել իրրի մարմնացումն  
նորա անցեալի և ներկայի: Խօսքս երկու պատ-  
րիարքների մասին է, նախկին Մատթէոս Իզ-  
միրլեանի և նոր-Նուրեանի\*): Նախկին պատ-

\*) Յարգելի հեղինակը թէև միամտաբար, բայց խիստ  
տեղին շփոթել է անուանական Բաղդուղիմէոս եպ. Չամչեանի  
անունը իսկական պատրիարք Նուրեան Էֆենդիի անուն հետ:

րիարքն ապրում էր Սկիւզարում, որը բաւականին հեռու էր իմ բնակարանից: Անցնելով ամբոխով վխտացող Բերան և ցած գնալով ստորերկրեայ երկաթուղով, ես հասայ Կիպրիւի կամուրջին. այդտեղ նստայ մի ոչ մեծ շոգենաւ, որը կարում էր Վօսֆօրի գմբուխտանման թափանցիկ ջրի սպիտակ փառը: Անամպ երկիրքը, լուսաւորւած այրող արեով, կարծես թէ շիկացած էր: Օդի մէջ տիրում էր աննկարագրելի լուսթիւն և այն ամենին, ինչի որ ձեռք տայիք տար էր: Ընդենաւի մէջ շատ ճանապարհորդներ շկային. փոքրիկ երեսան, ֆաուր գլխի յետեր քցած, բաժանում էր ջրով լիքը բաժակներ, որը բոլորն էլ ազահուլթեամբ խմում էին: Ահագին քանակութեամբ մակոյկներ կտրում էին մեր ճանապարհը և շոգենաւը յաճախ շւացնում էր սուր ձայնով: Վերջապէս ահա և Սկիւզարը: Տալով տոմսակս վերահսկիչին, և ափ գուրս գալով ես առաջ գնացի նախկին պատրիարքի բնակարանը փրնրելու, որը շատ էլ հեշտ բան չէր: Հինօրեայ թագերը, նեղ հիւսւած փողոցներով, կիսօրեայ տօթի պատճառով բոլորովին ամայի էին: Ոչ մի տեղ գուր չէր տեսնի ոչ փողոցի անուն

ոչ տան համար, և օրովհետև այնտեղ ձեզ չի հանդիպում ոչ մի կենդանի շունչ, այդ պատճառով երբեմն ձեզ տիրում է խիստ մեծ յուսահատութիւն: Բայց այս անգամ բազմն ինձ ժպտաց, և մի հտտափօր թուրք, որը կրակարանի վերայ սիմինդր էր պատրաստում, ցոյց տուց ինձ ճանապարհը:

Նախկին պատրիարքն ապրում էր մի ոչ մեծ անակում, սրի փակւած վեղկերը կոյր աչքերի ազաւորութիւն էին թողնում: Գուռը փակ էր և բոտ հին սովորութեան ես խփեցի օղակին: Այնքան էլ շուտ չբաց արին դուռը, իսկ բաց անելուց յետոյ գուցէ ծառան ինձ ներս շխոպնէր, եթէ ես հետս վերցրած շլինէի յանձնարարական տոմսակը: Նայելով տոմսին ծառան ժպտաց և ներս թողեց ինձ նախասենեակը, սրտեղ բաւական հով էր: Անցաւ էլի մի բանի բոպէ, դուռը բացուեց և ես ներս մտայ ներքին օթհանները: Սենեակի կահաւորութիւնը հասարակ էր, նոյն իսկ ճգնաւորական: Պատերի տակ դրւած էին ցածրիկ օթոցներ, վարագոյրների միջից տարածւում էր աղօտ լոյսը, որի սսկեզոյն շերտերը այստեղ ու այնտեղ ցոլանում էին բարձերի միջից և

ջինջ լուսով լուսաւորում էին անկիւնում կա-  
խած մեծ խաչելութիւնը: Մի բազէից յետոյ  
լուեց ծերունու հազը, քարեայ յատակին բըս-  
ւող հողաթափներն ձայնը և երեսայ պատրի-  
արք Իզմիրլեանը աէր-սղարմեան համբելով,  
բոլորովին զառամեալ ծերունի, գողբջիւն  
զլխով, լզար մատերով: Նորա աչքերը նայում  
էին ազօտ ու յոգնած: Ակնայանի երեւում էր,  
որ դժբաղգուածեան սյժը փշրել էր այդ մար-  
դու պողպատեայ բնաւորութիւնը, որը նոյն  
խակ, նորա թշնամիների կարծիրով, միակն էր,  
որ չէր վախենում ասել ճշմարտութիւնը ոչ  
միայն Իզմիրլեանի շրեզ բնդունարաններում,  
այլ նոյն խակ փաղիշահի երեսին: Այդ, իհար-  
կէ, ոչ սրի դուր չէր գալիս: Բ.-Գրան հեղ-  
ձուցիչ պայտատական միջնորդում այդ ծերու-  
նու ձայնը սուր աններգաշնակութիւն էր կազ-  
մում, որ ասում էր ճշմարտութիւնը անվախ,  
կտրուկ, որը ոչ մի կապ չէր ճանաչում ամօթ-  
խածութեան հետ: Ծռել նրան անհար էր,  
նրան միայն կարելի էր ջարդել, որը վճռեց  
ինքը միայն Սուլթանը, և այն էլ երկար տա-  
տանումներից յետոյ:

Ծերունին հրաւիրեց ինձ նստելու: Նորա

զէմրի վերայ տարածւած թախիծն այնքան  
անկեղծ, այնքան խորն էր, որ սուղակի ես  
չէի համարձակում խօսել նորա հետ ինձ հե-  
տաբարբոզ հարցի մասին: Քցելով թագակէյը,  
պատրիարքն ինքն սկսեց խօսակցութիւնը, և  
քանի նա շատ էր խօսում այնքան աւելի սթեզ  
բոցով վառւում էին նորա աչքերը և լցում  
էին նախկին կրակով:

— Չեր առաջ կանգնած է հովիւր — ասաց  
նա — սրի ոչխարները մտթեցին և ցրեցին  
ամբողջ հօտը: Ի՞նչ պէտք է անէ այսուհետեւ  
հովիւր: Որտեղ նոցա, վերադարձնել իւր հօ-  
վանու տակ և ազօթել նոցա համար, որտեղ  
այնտեղ լեռնային գիւղերումն են: Ես արեցի  
այդ բոլորը, ազօթեցի ամբողջ գիշերներ,  
բայց Տիրոջը հաճելի չէին իմ ազօթքները:  
Այժմ ես մինչև անգամ գրկւած եմ հովազան  
գաւազանից և իմ խցի խորութեան մէջ կա-  
րող եմ միայն յիշել անցեալը և նորից ազօ-  
թել Աստուծոն, սրպէտղի նա իւր հովանու  
տակն առնէ և սփովէ: Հայոց թշուա ժողո-  
վուրդը: Հինգ դար գերութիւն, դա նշանա-  
կում է տասը միսնանց յաջորդող սերունդ  
զգում են իրենց վրայ կիտալուսնի սյժը. դա

արդէն դժուր է: Մեզ տւին Սահմանագրութիւն 61 թւին և 78-ին և վերջը ցոյց տւին թէ ինչպէս յիմարացրին մեզ, ինչպէս ծիծաղեցին մեզ վերայ խելով այն իրաւունքները, որոնք երեկ մեր առաջը բցեցին ինչպէս շնորի: Մեզ գրգռեցին, խարեցին սուէրով և երբ, դպալով մօտեցող ազատութեան արշալոյսը հայերը սկսեցին ձգտել դարգանալու, առաջ գնալու, այն ժամանակ որոտացին հրացանի հարւածները, շողջողացին դանակները, մշակւած դաշտերը դարձրին անապատներ և հարուստ գիւղերը—աւերակների կոյտեր:—Ինչի համար: Միթէ թուրքերը կարող էին մտածել, որ, չայերը երեակայում են բաժանել Բ.-Գոնից և կազմակերպել առանձին թագաւորութիւն: Միթէ այդ է մեզ պէտք: Մենք պահանջում ենք միայն, որ իւրարանջիւր հայի տրւի հանրամարդկային իրաւունքներ, իրաւունք կեանքի և ոչ երկիւղ թէ եթէ ոչ այսօր—վաղը նրանից կխլւի այն ամենը ինչ որ ձեռք է բերել տարիներով, ինչ թանկ է նրա սրտի համար: Լրագրներում գրում են կարճ, որոշելով այս ամենը մի խօսքով—կոտորած. բայց դուր գիտէր արդեօր ինչ բան է կոտորածը: Երբ

այնտեղ ու այտեղ դիզւած են այլանդակւած դիակներ, արիւնը հոսում է առւակներով...

Պատրիարքը կանգ առաւ. նա խիստ յուզւած էր. նորա ձեռները գողգողում էին և արագ արագ քցում թաղալէյր:

—Եւ ինչի համար այս բոլորը: Ինչո՞ւ: Ի՞նչ են արել նոցա այն երեխաները, որոնց նորա չէն խղճում և ամնջում են մայրերի աչքի առաջ, որոնց յետոյ բռնաբարում են: Ի՞նչ պատճառով, հարցնում եմ ձեզ, ինչո՞ւ: Եւ յանկարծ, միանգամից կանգ առնելով նա իզուր աշխատում էր զսպել արտասուքի ամբողջ հեղեղը, որը կարծես ամաշելով թափւում էր նորա կնճուռա այտերի վրայից և թարնւում էր ախիտան մօրուքի մէջ: Պատրիարքը արցունքը սրբեց իւր հագուստի թեկերով և խնդրեց ինձ ծխել, բայց երևում էր, որ յուզմունքը մոնչում էր նրա կրծքում և նա ուրախ էր, անձնատուր լինելով նորա ինքնիշխան յորձանքին, պատմել, մասնակից անել ինձ այն բանին, որ վաղուց կեղեքում էր նորա հոգին:

—Արտասահմանի պետութիւններն, այս բոլորին նայում են անտարբեր աչքով, չցանկա-

նայով մանկի մեր գրութեան մէջ, չցանկանալով թեթեալներէ մեր ձեռնառագիւրը, կարծես թէ մենք էլ նոյն քրիստոնեաները չենք: Գուր զարմանում էր առաջին քրիստոնէաների օրինակներով, սրտնք մեռնում էին կրկէսի հրապարակում. բայց մի թէ մեր քահանաները, սրտնք տկարացած լեզուով արտասանում են Քրիստոսի անունը, երբ նոցա խաչում են, աւելի քիչ յարգանքի են արժանի: Հարցնում եմ ձեզ, արդեօք ինչո՞ւ ոչոք չի պաշտպանում նոցա: Քաղաքականութիւն, — հեղուօրէն ժպտաց հայ եկեղեցու նախկին պապը, — ահա թէ ճշմարիտ ստեղծել են իրանց համար մի նոր կուրս և ինքեանք երկրպագում են նորան: Եւ այդ Մոլոսին բերած է գրեթէ հարիւր հազար զոհ: Մի թէ Եւրոպացիների սիրտը այնքան քարացել է, որ նորա արդէն բոլորովին չեն ընդունում խղճի զգացմունքը: Մտածեցէք, 19-րդ դարի վերջում, քաղաքակրթութեան և Եւրոպական ցամաքից մի քանի քայլ հեռու, դանակի տակ ընկնում են ամբողջ գերգաստաններ, անիծելով իրենց ծննդեան ժամը: Ասում են, թուրքական գործերին խառնելը անմիջապէս առաջ կրերէ պատերազմ:

Աստուած մի աբասցլ, և ինձ համար, իբրև հոգեւորականի, սոսկալի և մահացու մեղք կլինէր ցանկանալ այդ. բայց կայ մի ուրիշ ելք: Այդ — մի քանի պետութիւնների միահամուռ հաստատուն ստիպողական խօսքն է — և Թիւրքիան կհպտտակւի նոցա պահանջներին: Թիւրքիան համարում են վերածնուող, կամ աւելի ճիշտը այլասեռւած մի մարմին: Բաւական է երեսանց ծանօթանալ այս երկրի կեանքի հետ, սրպէսզի համոզւէք, թէ այս երկիրը քայքայւում է և հեռու չէ այն ժամը, երբ նա վերջ կտայ իւր գոյութեանը իբրև առանձին թագաւորութիւն Եւրոպայի սահմաններում: Այն պետութիւնը, որտեղ սպանութիւնը համարւում է օրինական գործ, որտեղ թագաւորւում է սուլտը, որտեղ ամեն բան հիմնւած է կաշառքի և փողի վրայ, գոյութիւն ունենալ չի կարող, որովհետեւ հէնց նրա կեանքը յայտնւում է իբրև մի անբարոյական գրութիւն: Եւրոպան իզուր է բոլորովին ճգնում պահպանել Գրան թուլացած կազմւածքը. այն երկիրը, որը չի ենթարկւում քաղաքակրթութեան, մեռած է:

Պատրիարքը նորից լսեց:

Հանդարտ քայլերով քարէ յատակի վերայ, ներս մտաւ ծառան և մեզ սուրճ բերեց փոքրիկ ֆինջաններով:

—Ահիշայանի է գեռ ևս երկար պիտի գոյութիւն ունենայ աշխարհը մինչև «Մի հաւ և մի հովիւ» լինելը: Մենք գտնուում ենք 20-րդ դարու շէմքին, գիտութիւնը յառաջ է գնում հսկայական քայլերով, գիւտեր են լինում գիւտերի յետևից, բայց կատարելագործելով իրանց միտքը, մարդիկ ցամաքեցնում են իրանց սիրտը և մօտենում եւամոլութեան: Եւ մինչգեռ այս ափում աղատութիւն են գոռում, միւսում լսում են օգնութեան կանչող ձայներ: Եւ միթէ Եւրոպան չը պիտի կանգնեցնէ մեզ վերայ բարձրացած ձեռքերը: Միթէ Տէրը չի լսում ամբողջ ժողովրդի աղօթքը: Ինչի համար է նա մեզ ուղարկում այս փորձութիւնը:

Պատրիարքը ոտքի ելաւ: Նորա աչքերը յանկարծ կրակով վառւեցին և նա բացականչեց. —Թող չգան մեզ միտիթարելու, մենք այնուամենայնիւ միայնակ շենք, մենք միշտ յիշում ենք, որ անտեսանելի կերպով մեզ հետ է նա, Որը արտասանեց այս մեծ և յաւիտենա կանխօտերը. «Եկայր առ յիս ամենայն վաստա-

կեայր և ծանրաբեռինք»: Եւ նա եռանդուն շարժւածքով ցոյց տուց անկիւնի խաչելութիւնը:

Պատրիարքի հետ սենեցած խօսակցութիւնն ինձ վերայ ուժեղ և խորը տպաւորութիւն գործեց և ևս վերադարձայ տուն բուռն մտախոհութեան մէջ: Խոստովանում եմ, իմ մտքովն անգամ չէր անցնում թէ Հայկական եկեղեցու խաղաղացման աշխատանքն և ամբողջ ծանրութիւնն ընկած էր մի այնպիսի անձնաւորութեան վերայ, որը այս ամենք, կրում էր իւր ուսերի վրայ... Իսկ հարթող ժամանակն անհետացնում է այդ սարսափների բոլոր հետքերը:

### III

Բաւական չէ ինչ որ խօսում են նոր պատրիարքի մասին, աւելի լաւ չէ անձամբ ստուգել: Եւ միւս օրը ևս ուղղւեցի դէպի նոր պատրիարք Նուրեանը: Նորին սրբազնութիւնն ապրում է ամբանոցում և իւր Գում-Գափուի

ձմեռնային բնակարանը ուշ ուշ է վերադառնում և միշտ շատ վաղ, խոյս տալով տաժանեղի տօթից: Չանագան մարդկանցից էս հաւարկ էի մեծ քանակութեամբ ընդհանուր տեղեկութիւններ, այնպէս որ պատրաստուած էի ամեն բանի: Այն համբարը, որ նա ունի իւր ազգի մէջ, խիտտ աննախանձեղի է: Ճկուն, խարդախող, նա իւր ամբողջ կեանքում ձգտում էր մի որևէ գեր կատարել, բայց այդ բանը նա ուզում էր անել իւր անձնական հայեացրների գեղավարութեամբ: Թուրքերը նրան անւանում են «խրենցը»: հեշտ է հասկանալ, որ հայերի համար այդբանն էլ բաւական էր հրաժարելու նորա պատրիարքական օրհնութիւնից: Հին պատրիարքը գրկեց իւր աթոռից Սուլթանի հրամանով և այդ հրամանը նուրեանը բերեց ժպիտն երեսին: Հայոց կրօնական ժողովը նրան սառն ընդունեց և ժողովից սպասուող ընդգլխագրութիւնը, սրով նա կարող էր բացարձակ ցոյց տալ իւր իշխանութիւնը նա շարտայայտեց: Նուրեանն ստանձնեց իւր իրաւունքները, որն ընդունեց ոչ բարեկամարար:

Պատրիարքի նախատեսնեալում սպասուած էր մեծ բազմութիւն. այդտեղ կային զէմբիբը փաթաթած լաղալումած աշրերով պառուներ, ձերունիներ, կրօնաւորներ—մի խօսքով այն սովորական ժողովուրդը, որ լինում է մեր, Ռուսիայի առաջնորդական ընդունարաններում: Ես տոմսակները յանձնեցի վարդապետին, որը տարաւ նախ տեղ նորին սրբազանութեան բարտուղարին. ֆէտով բարտուղարը գուրս եկաւ և խնդրեց ինձ սպասել, սրովհետև պատրիարքն զբաղւած է լծվիւթի ընթերցումով: «Նա այնքան զբաղւած է այժմ, աւելացրեց բարտուղարը, այնպէս զբաղւած է, որ գուր երեակայել անգամ չէր կարող: Գործերը գտնեցին բոլորովին անկանոն, ձերուկը միշտ միայն խօսում ու լալիս էր և ոչինչ չէր շինում, այնպէս որ ստիպւած ենք ամբողջ աշխատութիւնը սկզբից կարգի բերել, որմեր պատրաստում ենք նորին մեծութեան Սուլթանին գեկուցանելու»: Քարտուղարն անյայտացաւ և ընդունարանում նորից լուեց դո՛ւ, զոպւած խօսակցութիւնների և ծանր հառաչանքների: Անցաւ ուղից կէս ժամ, երբ դռների լոյսն մէջ նորից յայտնեց բարտուղարի կորացած մար-

մինք, որն ինձ նշանով հրաւիրում էր ներս մտնել:

Պատրիարքի առանձնասենեակը կահաւորած էր գեղեցիկ և հարուստ կերպով: Պատերից կախւած պատկերներ, կրօնական բովանդակութեամբ, օթոցներ, ծանրաբեռնւած թղթերի կոյտերով, գրքերով և վերջապէս սեղան, որի վերայ նոյնպէս դիզւած էին թղթի հակերը: Ակնյայտնի երևում էր, որ պատրիարքն սենեկը ահագին գրագրութիւն: Նորին Սրբազանութիւնը նստած էր սեղանի առաջ և ինձ նշանացի հրաւիրեց նստել: Նա արդէն երկտասարգ չէ, նորա ուռած աչքերով լիրը դէմքը թիչ արտայայտիչ էր, իսկ փափրիկ ձեռներն անվրդով գաբւած էին փորի վերայ: Անդորրութիւնը երևում էր նորա իւրաքանչիւր շարժումից, բայց մարդու այնպէս է թւում, թէ այդ բոլորը չինձու է: Պատրիարքը, որ մինչև այդ ժամանակ լուռ էր, ասաց.

— Ես սպասում էի, որ դուք ինձ մօտ կհանդիպէք:

— Ինչով արժանացայ ես այդպիսի պատուի:

— Ինձ իմացրին, որ դուք եղել էք իմ

նախնորդի մօտ և շատ երկար խօսակցել էք նորա հետ: Կարոզ եմ ասել, որ դա բոլորովին իրուք էր: Ծերունին վաղուց արդէն դարձել է մի ինչ որ շատախօս երեսայ. լայիս է, թափահարում է ձեռները, կոծում է և ինքն էլ չզիտէ թէ ինչի համար:

— Բայց Չերդ Սրբազանութիւն, նրա սրտին մօտիկ են իւր ազգի տանջանքները:

— Իսկ ինչու էք կարծում, որ նորա իմ սրտին ես մօտիկ չեմ — վեր թուաւ նա և նորա աչքերը փայլեցին, բայց միայն մի ափնթարթ և իսկոյն նորից հանգան: — Ինչու էք դուք այդպէս կարծում: Չեզ մօտ ինձ արդէն գրպարակ է ծերունին: Միթէ դուք կնժաղրում էք, թէ ես չզիտեմ այն բոլոր բանբասանքները, որոնք պատուում են իմ մասին: Ասում են, որ ես և Գրան հաւատարիմն եմ և Սուլթանի ծառան. բայց ախար, ներեցէք, ես նորա հպատակն եմ և այդ պատճառով պարտաւոր եմ հնազանդելի նորա կամքին: Կրճի տարրերութիւնն այստեղ չպէտք է ունենայ ոչ մի նշանակութիւն: Չեզ հետաքրքրում են հայկական անկարգութիւնները, ուրեմն ցանկա-



լի չէ՞ ձեզ յետի իմ բերանից, որ նորա գու-  
լութիւն չունեն:

—Այդ ինչպէս: Իսկ լրագրական տեղե-  
կութիւնները, ականատեսների պատմածները...

—Այդ լրագրներին ամենաշնչին հաւատ  
անգամ չի կարելի ընծայել, որովհետեւ այդ  
բոլորը շափագանցրած է, և բացի ստուծիւնից  
ու հնարածքից, նոցա մէջ ուրիշ բան չկայ:

—Բայց, ձերդ սրբազանութիւն, սրբան  
էլ հնարեն լրագրները, այնուամենայնիւ չեն  
կարող ստեղծել հազարաւոր գէշակներ, որոնք  
թափւած են գիւղերում:

—Իսկ սիլ է տեսել այդ գիտիները:

—Նո չեմ բացատում, — շարունակեց նա —  
հայկական անկարգութիւնները բոլորովին, բայց  
նոցա չեմ տալիս այդպիսի նշանակութիւն: Դա  
փոքրիկ, առանձնակի ընդհարումների մի ամ-  
բողջ շարք է, որը հեռուից երևում է խառնւած  
մուշի մի ամբողջութիւն: Մի տեղ անկարգու-  
թիւնը ծագում է իբրև հետեանք անձնական  
անբաւականութեան, միւսում անտեսական  
պատճառով, երրորդում իշխանութեան պա-  
հանջներին հակառակելու և այլն: Բայց ինչու  
այդ բոլորը նկարել միևնոյն գոյնով, բոլորին

տալ բնդհանուր բնաւորութիւն — ահա, ըստ յիս  
ինչումն է մասուլի սխալը: Վերջապէս, եթէ  
ցոյց են տալիս դոհերի ահագին բանակութիւն,  
էլի այնուամենայնիւ թուրքերին շատ մեղա-  
գրել չի կարելի. դուք չպէտք է մոռանար բա-  
ղարակրթութեան այն աստիճանը, որի վերայ  
նորա կանգնած են և դսրա համար նոցա  
պէտք է վերաբերել զիջողաբար: Ո՞վ պէտք  
է առ թուրքին, թէ սպանութիւնը շարագոր-  
ծութիւն է և նորան իրագործելը — անգթու-  
թիւն է և անբարոյականութիւն: Մօլլան, ընդ-  
հակառակը, ձգտում է բորբոքել կրքերը, որով-  
հետեւ կրօնը պահանջում է բնաջինջ անել գեա-  
ւորներին, իսկ ամեն մի աւարառութիւնից  
հարստանելով է մէջէդր. ուրեմն՝ հետեաբար և  
ինքը:

Այնքան էլ չի կարելի նոցա անպայման  
մեղագրել: Ի՞նչ անենք, զժբազգ հայերը կրում  
են այժմ այն բոլորն, ինչ որ բսան տարի  
առաջ կրեցին բուլղարները: Բայց վերջինները  
ձգտում էին ազատութեան, իսկ առաջիններն  
ամենին չեն ցանկանում դուրս գալ թուրքա-  
կան լծի տակից, որովհետեւ հայ ժողովրդի  
ամբողջ հարստութիւնը կախւած է այստեղից.

Արեւելիի վաճառականական շրջանառութիւնից: Հայերի սխալը, իմ կարծիքով, նրանումն է, որ նորա հակառակեցին թուրքերին, իսկ դրանով աւելի ետ շարագրին նոցա և իրենց գլխին բերին նոր թշւառութիւններ: Եթէ նորա հնազանդէին, ոչինչ էլ չէր պատահի և գործն էլ կվերջանար փոզի գումարով:

— Չերդ սրբագնութիւն, — ասացի ես, — ինձ համար հետաքրքիր էր հարեանցի նայել ամառային և իմանալ գործողութիւնների այն ծրագիրը, որով գուր մտադիր էր զեկամարել:

— Ես ձեզ չեմ կարող ասել բոլորը, — պատասխանեց պատրիարքը — ոչ թէ այն պատճառով, որ այդ ձեզանից թագցնում եմ, այլ հետեւեալ պատճառով: Իմ նշանակելն այնքան անսպասելի և արագ կատարեց, որ ես գրականապէս չկարողացայ մտրերս հաւարել: Իմ մասին պատուոյ յարերից դուր, հաւանական է, գիտէր, որ ես չեմ օգուում ժողովրդի համակրանքներով: Եւ այդ շատ հասկանալի է: Այն բողեներին, երբ ամբոխին կամ ժողովրդին տիրում է ընդհանուր յափշտակութիւնը, դորան չենթարկուող անձնաւորութիւնները միշտ ատելի են դառնում: Խոհեմութիւնն ու հեռա-

տեսութիւնն այդ բողեներին համարում են դաւաճանութիւն ընդհանուր գործին. բայց գրա փոխարէն յետոյ գիմում են նոյն այդ անձնաւորութիւններին: Ես պատրիարքական գահը բարձրանալուց չվախեցայ, գիտենալով, որ իմ յետուս ևս ունիմ կրօնական ժողովի, ժողովրդի և մամուլի ատելութիւնը: Ես խօսքը համազուտ եմ, որ իմ գարծողութիւնների ձեռք որոնք յարում են միայն հայերի օգտին, վերջի վերջոյ նոցա կգարձնէ իմ կողմը և Նուրեան անունն այլևս չի արտասանելի գայրոյթով: Այդպէս ուրեմն, ես մտադիր եմ գիմնի սուլթանին զղջմամբ և խնդրել հայերի ներման համար, որոնք իրենց մեղաւոր են ճանաչում նրա իշխանութեանը հակառակելու համար: Սուլթանի այժը մեզ ընկճեց, ուրեմն պէտք է հնազանդել: Ես հաւատացած եմ և այս բանի համար փաստեր ունեմ, որ սուլթանը սղորմածութեամբ կլսէ ինձ և բաւական է նրա միակ խօսքը միակ շարժումը, որպէսզի ամէն բան վերջանայ: Երբ յուզմունքերը կհանգչեն, ժամանակի ընթացքում կարելի կլինի նորից սկսել միջնորդել իրաւունքների ընդարձակման մասին, բայց այժմ ոչ մի այդ տեսակ թայլ

չի կարելի անել: Գուր չգիտէր Արևելքի ներքին բաղադրականութիւնը: Նորա հիմնական սկզբունքը հետևողականութիւնն ու աստիճանականութիւնն է: Բայց նախքան սուլթանին դիմելը, ևս պէտք է խնդրեմ բոլոր մեծ պետութեանց ներկայացուցիչներին, որ նորա ամենափոքր ճնշում անգամ չզործադրեն Բարձր-Պրան վերայ: Արտաքին ճնշումն այդ հարցին տալիս է չափազանց լուրջ բնաստութիւն և այդ պատճառով կառավարութիւնն սկսում է խիստ զգոյշ գործել. և կամ ընդհակառակը, որպէսզի տպացուցէ Եւրոպայից բոլորովին անկախ լինելը, չի փոխի գործադրութեանց արդի ձևը: Մի խօսքով, պէտք է սպասել, որ հայկական հարցը այսօր կամ վաղը կտանայ միջազգային ձևով:

Ես ցանկանում էի մի բանի հարցեր ևս տալ, բայց յիշեցի ընդունարանում սպասող խնդրատուններին և նկատեցի մի բանի արագ հայեացքներ, որ պատրիարքը ուզելց պէտքի պատից կախած կոյոր ժամացոյցը: Ես վեր կացայ, շնորհակալութիւն յայտնեցի պատրիարքին ինձ շնորհած ժամանակի համար և մնաց բարեաւս տւի: Պատրիարքը գանգահարեց և

բարտուղարը գուրս բերեց ինձ ընդունարանը, որտեղ այդ ժամանակի ընթացքում խնդրատունների բանակցութիւնը ակնյայտնի կերպով բաղմացել էր: Նկատելով որ ես նոցա նայում եմ, բարտուղարը ասաց.

— Բոլորը սպասում են նորին սրբազնութեանը և խնդրում են նպաստ ու հովանաւորութիւն հայ սրբերին ու այրիներին, հաւատացնելով, որ նոցա ամուսիններին ու հայրերին մորթել են թուրքերը, կարծես թէ, յիբաւի, հայկական կոտորածը գոյութիւն է ունեցել:

Եւ նա ուտերը վեր բաշեց:

Պատրիարքի խօսակցութիւնը, բարտուղարն ու իւր ֆէտը—այս բոլորը վկայում էին, որ թուրք կառավարութիւնը չէր սրտաւել, նշանակելով Նուրեանին, և խեղճ ժողովուրդը հազիւ թէ իրաւունք չունէր անւանել նորան Սուլթանի կողմնակից:

Համեմատելով երկու պատրիարքների խօսակցութիւնը ես եկայ այն համոզման, որ խօսել էի իսկապէս եկեղեցու միայն մի ներկայացուցչի հետ, սրովհետեւ միւսը չափազանց

քաղաքապետ և շափաղանց թիչ սրտի մարդ էր, որպիսին աւելի բնական էր սպասել հոգևորականներէց:

## IV

Հետեկոյ լատինական առածին *audiatur et altera pars*, ևս վճռեցի խօսել էլի մի քանի մարդկանց հետ: Բարձր դիրք ունեցող թուրքերից առաջինը, որ համաձայնեց խօսակցել ինձ հետ, Նազըմ-փաշան էր, ստիկանութեան նախարարը, այժմ արդէն հրաժարեցրած: Պէտք է նկատել, որ Թիւրքիայում ստիկանութեան նախարարութիւնը ունի խիստ բազմակողմանի պարտականութիւններ: Նորա վերայ է ընկած ոչ միայն արտարին կարգապահութիւնը պահպանող հաստատութիւնների բարձրագոյն հսկողութիւնը, նաև գաղանի գործակատարների, որը, 'ի միջի այլոց առած, խիստ շատ տարածւած է Թիւրքիայում, այլև, գոցա հետ միասին, գործերի ընթացքի ընդ-

հանուր հսկողութիւնը, այնպէս որ նա անգիտակցաբար մտնում է ներքին գործոց նախարարութեան պատկանող շրջանի մէջ: Ժողովրդական թափօրների ժամանակ ստիկանութեան նախարարը տեղ է բռնում սուլթանի կառքի առջևի մասում—մի պատիւ, որին չեն արժանանում ուրիշները:

Նազըմ-փաշան ինձ ընդունեց վաղ առաւօտեան իւր առանձնասենեակում, որը բառի բուն նշանակութեամբ լցւած էր թղթերով: Արդէն ոչ երկուսսարդ, դէմքի խիստ գծերով և խորամիտ սուր աչքերով, նա հնարապետ և խորամանկ մաքրու տպաւորութիւն է թողնում: Նշանացի հրաւիրելով ինձ նստել, նա առանց մի սրկէ նախարանի, դիմեց մեր խօսակցութեան առարկային:

— Հայկական հարցը ոչ այլ ինչ է,— առաց նա,— եթէ ոչ ցոլացումն երոպական սոցիալական մեծ շարժման: Միք մտանայ, պարոններ, այն, որ իսկուպէս սոցիալական շարժումը բարոյում է կախ շքաւոր գասակարգի ընդդէմ գրամագլխի: Այստեղ փողատէր— կալւածատէրեր հանդիսանում են հայերը և հետեարար, ստորին գասակարգի բոլոր առե-

լութիւնը պէտք է ուղղւած լինի նոցա զէմ, իսկ որովհետեւ հայերը շափաղանց անսիրտ են, գորտ համար էլ այդ ատելութիւնն արտայայտուած է կոպիտ և անգուժ ձևերով:

—Բայց ներեցէք, զենեբալ,—վճռեցի ես ընդհատել նորան,—այդ զէպրսւմ թուրքերը պէտք է միայն ջարդէին հարուստ հայերին, բայց նորա կոտորում են աղքատներին ես:

—Ձեր ամբողջ սխալը հէնց նրանումն է, որ գուր ենթադրում էք և մինչև անգամ հաւատացած էք թէ գոյութիւն ունեն աղքատ հայեր: Իւրաքանչիւր հայ—վաշխառու է և ամբողջ տարբերութիւնը նոցա առևտրի մեծութեան մէջ է: Իսկ եթէ հայկական հարցին տանք քաղաքական նշանակութիւն և աչքի առաջ ունենանք Անգլիայի մեզ համար վիրաւորական միջամտութիւնը, այդ, պարզ է, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ցանկութիւն, խանգարել Ռուսիայի և Թիւրքիայի մէջ եղած բարեկամական յարաբերութիւնները: Անգլիայում, իհարկէ, համոզւած են, որ Ռուսաստանը, ոչ մի պայմանով հայերի համար զէնք չի բարձրացնի: Բույզարիայի օրինակով նա արդէն

բանակաճաշափ խրատուել է: Բայց հայերը երբէք, ոչ մի կերպ չեն կարող այդ ներել նորան. այդ պատճառով Ռուսիայի և Թիւրքիայի անխափան սահմանների մէջ տարածւած կմնայ զայրացած Հայաստանը, որը կխանգարէ կրկու թագաւորութիւնների բարեկամական յարաբերութիւններին և կանոնաւոր առևտուրին, իսկ պատերազմի զէպրսւմ կարող է Ռուսիային խիստ անյարժարութիւններ ցայց տալ: Բայց մի կողմ թողնելով պատերազմը, նոյն իսկ խաղաղ յարաբերութիւնների կանոնաւոր ընթացքի խանգարումն էլ անգլիացիների համար օգտակար է, որովհետև վաճառականական պահանջները դառնում են զէպի նա: Ի հարկէ ես ձեզ չեմ կարող տեսլ այն ամենն, ինչ որ զիտեմ, իմ զիրքի պատճառով, բայց պէտք է խոստովանել, որ մենք սպանւած հայերի մօտ գտանք Սմիլի և Վեսսելի (անգլիական) ատըրճանակներ, իսկ րիւրդերի մօտ—անգլիական ոսկի: Եւրոպական լրագրութիւնը շափաղանցրած լուրեր է տարածում, իբր թէ սուլթանը համակրում է հայերի զէմ եղած շարժմանը: Իւր ամբողջ մեծազօրութեամբ նա ներկայ ժամանակում ոչինչ չի կարող անել, սրովհետև

հոգեւորականութեան հետ կաւել նորա սլովից բարձր է:

—Չեր կարծիրով, ինչո՞ւ—հարցրի ես— պէտք է վերջանայ հակահայկական շարժումը:

—Իմ կարծիքով, ոչ մի խիստ միջոց թուրքերի կամ քիւրդերի դէմ, ոչ մի հետեանքի շի հասցնի: Այդ միայն կարող է գայրացնել ազգաբնակիւթեանը, որը կհամոզւի, թէ այստեղ գործում են ոչ թէ արգարադատութեան անունով, այլ հայկական սսկու սլովով: Հայկական հարցը միայն այն ժամանակ կվերջանայ երբ հայերը բացառապէս կխոխեն իրանց վերաբերմունքը դէպի ազգաբնակիւթիւնը: Անհրաժեշտ է, որ նորա փոխեն իրենց հայեացքը Թիւրքիայի վերաբերմամբ և նորա վերայ չհայեն ինչպէս շահագործական հրապարակի վրայ, այլ ապրեն նորա շահերով և օգնեն նրան իրանց գրամագլուխներով շարժել յառաջադիմութեան ճանապարհով:

Սորանով վերջացաւ իմ խօսակցութիւնը սոսիականութեան նախարարի հետ և ես ուղղեցի դէպի միւսը—արտարին գործոց նախարար Թ.Ֆիկի վաշայի մօտ: Բ.-Պրան արտարին գործոց նախարարը խոյս տալով շորից և րա-

դարի աջմուկից ապրում է մի հրաշայի ամաբանոցում, բայց այնտեղ նա օգտուում է ոչ թէ մտրի, այլ միայն մարմնի հանդատութեամբ, որովհետև նրան անգագար անհանդատացնում են Թիւրքիայի խիստ բարգ բաղաբականութեան զանազան հարցերը: Այդ բոլոր հարցերին նա պէտք է անյապաղ պատասխան տայ, պարզէ բոլոր թիւրքիմացութիւններն և միննոյն ժամանակ զողողայ իւր ամեն մի բայի համար, որովհետև Թիւրքիայում մինիտրների սխալները չեն ներում, այլ այդ պատճառով նորա միշտ արսորում են խուլ, հեռուսր գաւառները:

Զրագմունքները Թ.Ֆիկի-վաշային զրկում են կողմնակի մարդկանց հետ խօսակցելու հնարաւորութիւնից, և այդ սրտաճառով ես ոտիպւած էի բաւական ժամանակ կորցնել, մինչև որ նա նշանակեց մեր խօսակցութեան ժամը: Պա կանուխ ժամերից մէկն էր, երբ դեռ Եւրոպայում քնած են և կամ զրազւած իրենց արգ ու գարդով և ոչ թէ պիտական գործերով: Ես ճանապարհ ընկայ, Վասֆորի հարթ հայելանման մակերեսովի վրայով, փորրիկ մակոյկի մէջ: Նա կանց առաւ պետական

մարդու հէնց ամարանոցի սանդուխներէ առաջ, որի աստիճանները յուրմ էին ջրի մէջ: Լաակեաց ծառան արգէն երևում էր, վազուց սպասում էր մեզ և հէնց խեղճն առաջնորդեց մի չրեզ նախասնեակ, որտեղ ես թողի գլխարկս: Նախարարի ընդունարանում հարկ չեղաւ սպասել և ոչ մի վայրկեան, որովհետեւ, ըստ երեւոյթին, նոյն ծառան արգէն յայտնել էր իմ գալուստը: Յարձր հայեացքով, նոր ձեռի խուզած մօրուքով, արգէն ոչ երիտասարդ, բայց վայելուչ և գեղեցկագէմ, նա երողական բազաբագէտի ասպարհութիւն է լծողում. բայց լաւ գիտելով նորան դուր կը տեսնէր, որ դա Արեւելի մարդ է, որը խիտ ընդունակ է լծարցնել իւր տէրի արտայայտութիւնը և ձգտում է բոլորովին անթափանցիկ դարձնել իւր գէմբը: Չեւրը գնելով ճակատին և սրտին նա մեզ հրաւիրեց նստել և որպէս զբաղած մարդ, որը չի սիրում իզուր ժամանակ կորցնել, նա խեղճն սկսեց այն խօսակցութիւնը, որի նիւթը վազուց արգէն, տեսակցութեան ժամանակը որոշելիս, նորան յայտնեւած էր:

— Չեզ, որպէս ռուսական մամուլի ներկայացուցչի, ասաց նա, հետաքրքիր է իմա-

նայ իմ կարծիքը հայկական հարցի մասին: Ես պատրաստ եմ, բայց սուրի համառօտութեան համար խնդրում եմ ձեզ ինձ հարցեր տալ, որոնց կաշխատեմ պատասխանել:

— Ի՞նչպէս էր նայում դուր հայկական հարցի պատճառների վերայ:

— Թուրքերի մեծամասնութիւնը, հետեւելով կարծառեւ թողարկանութեան բոլորովին հերքում է հայկական հարցը: Ես այդ չեմ անում և ասում եմ ձեզ, որ դժբաղգարար նա գոյութիւն ունի ոչ այն փորձիկ շափով, որ նկարագրում են լիցքակիցները: Նորա ծագման զլեւոր պատճառներն երկուսն են. առաջին՝ այդ հայերի և Քիւրդերի մէջ եղած լծնամութիւնն է, որը կայ և յաւիտեան գոյութիւն կունենայ, ինչ էլ որ զրեւն ու խօսեն, վերջապէս անեն հայկական հարցի մասին: Քիւրդերը վերին աստիճանի ինքնակամ, համարձակ, պատերազմական կեանքի սովոր մարդիկ են և հաւատացնել նոցա այն լծէ նորա վատ են վարում, իհարկէ անհնարին գործ է: Վերջապէս այդ տեսակի ցեղի բնաւորութիւնը Ռուսաստանին լաւ յայտնի է: Այդ Գովկասի շերտերն են: Ինձ կարող են ընդգլխախօսել

թէ այդ դէպքում էլ ինչն թիւրքաց կառավարութիւնը գինում է թիւրքերին: Բայց ինչ կարող է անել: Հայերը պատերազմի վերաբերմամբ չեն դիմանում ամենափոքր ընկալատութեան, իսկ այն ինչ սահմանների պաշտպանութիւնն անհրաժեշտ է, այդ պատճառով կառավարութիւնը պէտք է գէնը տայ թիւրքերին և պահպանէ այդ վերին աստիճանի օգտակար գորքը: Նորին մեծութիւնը ամեն մի միջոց գործադրում է թիւրքերին խաղաղացնելու, չի խնայում նոյն իսկ խիստ տուգանքների կենթարկել, բայց նորա շարունակում են իրենց գործունէութիւնը և թիւրքիայի վրայ բարդում են սոսկալի յանձանքների մեղադրանքը: Այդ առաջին պատճառն է, որը աւելի խորն է և յուրջ: Բ.-Պրան սովորական սխալներից մէկն, այդ նորա վտտահութիւնն է: 2րդ նայելով կրօնական տարրերութեանը, Բ.-Պուսը միշտ հնազանդւում է խորհուրդների և շէնչոյցների, իսկ իմ կարծիքով, թիւրքիան չպէտք է լսէ ոչ որի: Արևելքի զործերում մշտական խորհրդատուներից մէկն է հանդիսանում Անգլիան: Բայց անգլիական քաղաքականութիւնը ոչ միշտ անկեղծ ու պարզ է,

մինչև անգամ գործին մօտիկ կանգնած մարդկանց համար: Բացի գրանից Անգլիան իւր նպատակներին համեմու համար օգտւում է այնպիսի միջոցներով, որոնք բացարձակ կերպով անըմբռնելի են: Անգլիական կառավարութիւնն ունի գրգիշների անհամար բազմութիւն, որոնք փողի օգնութեամբ գլուխ են բերում աւելի վատ և աւելի յուրջ գործեր, քան Հայկական անկարգութիւնները: Այդ նորա բոլորովին իզուր տեղն են անում, կանցներ մի քանի տարի և Անգլիան կհամենէր իւր բոլոր ցանկութիւններին:

—Այսինքն:

—2<sup>ր</sup> որ Մեծ-Բրիտանիայի ամբողջ քաղաքականութեան խնդիրն է մեծացնել նորա հարստութիւնը և նրա վաճառականական շրջանառութիւնները: Անգլիան արտադրում է ահագին քանակութեամբ ապրանք և նորա ամբողջ հագն է գտնել իւր համար աճալին քանակութեամբ վաճառանոցներ: Հայերը՝ Ռուսիային մօտենալով, փոքր-Ասիայի համար կսկսէին Ռուսական ապրանք ստանալ, որի արժանութիւնը վերջապէս իհարկէ գուրս կմզկւ Անգլիականը: Այդ պատճառով Մեծ-Բրիտանիան



վճռեց օգտելոյ ցեղերի փոխադարձ ատելու-  
թիւնից և Հայերին բաժանեաժ անգլիական  
ոսկին պէտք է վճարէ ամբողջ Թիւրքիան։  
Այժմ Հայերը նոյնպիսի թշնամիներ ևն Ռու-  
սիայի ինչպէս և Ունգարները, և Անգլիան  
ապահովեաժ է վաճառանոցով, այլ կերպ ասաժ,  
նրա դերը կատարեաժ է փայլուն կերպով։ Այն  
ինչ Անգլիային հարկաւոր էր սպասել տաւր  
տարի ևս և Թիւրքիան կլինէր նորա հաւանա-  
կան վաճառանոցը առանց սրիէ արլինհեղու-  
թեան։ Եւրոպայում յիշ ևն հետաքրքրում  
Թիւրքիայի մտաւոր կեանքով և շին կասկա-  
ծում, որ մենք դուրս ևնք գայիս նոր ճանա-  
պարհի վերայ և որ մեր կեանքն այժմ ևսում  
է։ Թիւրքիան պէտք է կերպարանափոխուի և  
այն ժամանակ իհարկէ Եւրոպայիների հայեացք-  
ների մէջ փոփոխութիւն կմանի նրա մասին։  
Երիտասարդ թուրքերի կուսակցութիւնը ծա-  
րաւում է բարենորոգումների, բայց դո՞քա կա-  
րող ևն կատարել միայն աստիճանաբար և ոչ  
թէ ստիպելով։ Բոլորովին այլ բան է ներկա-  
յայնում Կրէտական հարցը։ Գուր յաւ տես-  
նում էր, որ ևս ձեզ հետ բոլորովին բաց ևմ  
խօսում և որ այլ քաղաքագլտի անկեղծու-

թիւն չէ, այլ ուղղակի Գրան հաւատարիմ  
հպատակի։ Կրէտական հարցը Հայկականին  
հակառակ վերին աստիճանի ուռեցնում ևն։  
Կրէտէն գանուում է բոլորովին այլ դրուժեան  
մէջ, բայց ասենք, կարծեմ այդ շպէտք է լի-  
նէր մեր խօսակցութեան նիւթը, — ժպտաց  
Թէֆիկ-Փաշան։

— Այդ գէպրում ևս ստիպեաժ ևմ վերա-  
դաւնայ մեր խօսակցութեանը, Չերզ գերա-  
գանցութիւն, և գիմնը ձեզ մի այլ հարցով։

— Խեղբիւմ։

— Հետաւում է սպասել մօտիկ ապագա-  
յում Հայկական գործերի փոփոխութիւն։

— Ես մարգարէ չեմ—նկատեց Թէֆիկ  
փաշան, բայց մեզանից բաղաբաղէաներիցս  
պահանջում ևն միշտ նախատեսութեան շնորհ։  
Համեցէր, ևս կտեսեմ ձեզ և այդ առիթով իմ  
կարծիքը։ Մօտիկ ապագայում Հայկական հար-  
ցը կլիւրջանայ այն գէպրում, եթէ, օտար պե-  
տութիւնները չեն սնենեայ նրա մէջ ոչ մի  
մասնակցութիւն, այլակերպ ոչ մի բանի վե-  
րայ չի կարելի յոյս դնել։ Թայլ տւէր, պա-  
րաններ, մենք ինքներս վճռենք մեր գործերը,

ապա թէ ոչ ազգային ինքնասիրութիւնը կըստիպէ մեզ շփարել այնպէս ինչպէս կ'ընդգրկէ խոհեմութիւնը: Փամանակի ընթացքում քիւրդերը կզազարեն Հայերին հայաժելուց, իսկ վերջինները կհաստիանան որ Բ.-Գրնից գուրանորա շէն կարող գոյութիւն ունենայ: Նորա խօսում են այն մասին, որ գտնուում են կիտալուսնի լծի տակ, բայց նոցա գրութիւնն աւելի լաւ է քան Թիւրքիայի սրբիշ շատ հպատակներինը: Նորա ունեն իրենց կրօնական ինքնավարութիւնը և եթէ նորին մեծութիւնը այժմ իրենց նոցանից մի բանի արտօնութիւններ, բայց չէ՞ որ նա իրաւունք ունի պատժել նոցա, որոնք շէն հնազանդուում իրան կամրին:

Փամացոյցը պարզ ձայնով խփեց ինն: Թէֆիկ-փաշան բարձրացրեց գլուխն և նորա գեմբի վերայ փայլեց մի փոքր անհանգստութիւն: Ես զգում էի, որ յետաձգում եմ նախարարին և արդէն սուգում էի հպատակել նրանից բաժանելու անհրաժեշտութեանը: Բայց Թէֆիկ-փաշան յայանի կերպով հետաքրքրուում էր միայն այդ խօսակցութեամբ, իսկ Աուսիայի մասին եղած կողմնակի խօս-

քերը ստիպում էին նորան մտանայ ընթացիկ գործերն և անձնատուր լինել խօսակցութեան: Եւ բարսովին աննկատելի մենք խօսեցինք մի ամբողջ ժամ, որի ընթացքում հարցերը փոփոխուում էին մէկը միւսի յետից և այդ բոլորի մէջ նախարարը խօսակցութեան տէրն էր հանգիստանում: Ակնյայտնի էր Թէֆիկ-փաշան պատկանում էր այն մարդկանց կարգին, որոնք գիտեն օգտել ժամանակից և միեւնոյն ուշադրութեամբ հետևում են թէ քաղաքականութեան ընթացքին և թէ զեղարեւոտի ու գրականութեան շարժումներին:

Վերջապէս հարկաւոր էր յետ դառնայ, ես մնառ բարեաւ ստացի և իջայ այլի, որն ամբողջապէս լցւած էր հարաւային արեգակի այրող ճառագայթներով: Մտկոյիլը թիավարի ձկուն ձեռքով գեկտվարելով, արագ ստհեց Վոսֆուրի միջից. իսկ ես վերադարձուում էի չիչուութեանս մէջ այն մարդու խօսքերը, որը առաջնորդում է Բ.-Գրան արտարին քաղաքականութեան բաղը և ներկայանալով փազիշահին զեկուցում տալու համար իւր հոգու խորքում զգում է միջազգային յարաբերութիւնների սխալները, բայց իրեն անկարող

է գգում, սրովհետեւ դարաւոր աւանդութիւններն աւելի դօրաւոր են մի անհատի ցանկութիւններէրից:



Անցան էլի մի քանի օր: Բնչպէս կղաւ մի անգամ նստած էի սենեակումս. հէնց նոր պտտաբաստում էի նամակ գրել, յանկարծ ինձ խանգարեց մի ինչ սք սուր, փողոցում տարածւած բարձր ձայն, կարծես ջարդում էին որևէ ծանր առարկայ, և այդ իսկ բոպէին ներս փաղեց ծերունի յոյն սպասաւորն այլայլւած գէմբով:

— Գծբաղդութիւն, ստակալի գծբաղդութիւն, — բացականչեց նա, — նայեցէր ինչ է կատարում փողոցում, հայերը արեցին օմանեան քանկին:

Ոչ թէ քաջատրտութիւնից, այլ հասարակ հետաքրքրութիւնից գրգւած ևս վերջրի գրլտարկո, ձեռնափայտս և սւղղեցի կզելու-

թեան տեղը: Ամբօխի հասանքն ինձ աւաջ քշեց. անկիւնում կանգնած էր ձիարարչը, որի ճանապարհի շարունակութիւնը փակւած էր: Վերջապէս ևս հասայ օմանեան քանկի շինութեանը: Գա շափաղանց փառահեղ է, շինւած մոխրագոյն քարից, բնեհասանի սճի խիստ հետևողութեամբ: Երբ ևս գուրս պրծայ ամբօխի միջից և շնորհիւ ստախկան — սպայի մարդավարութեան, կարողացայ այնպիսի տեղ բռնել, որտեղից ամեն քան տեսնում էի, առաջին քանը, որի վերայ ևս ուշադրութիւն դարձրի, այդ հաստիկ գոնապանի մարմինն էր, որին ևս օրը մի քանի անգամ տեսնում էի մուտրի մօտ աթոսի վերայ նստած լրագիր կարգալիս. նա սւղիւ պարկած էր, իսկ նորա ձեռքում գեռ ևս շարժում էր լրագրի թերթը: Բանկի շինութեան ազակիները վիշրւած էին. նոցա միջից հազիւ երևում էին անցուդարձ անող մարդկանց մարմինները. հրապարակում հաւաքւած ամբօխն ամբողջապէս բաղկացած էր քաղարի բնակիչներից, որոնք ամեն քանի վերաբերում են հանդիսաւոր հետաքրքրութեամբ: Չափաւոր քայլեր անելով երեաց հետեակ դօրրի մի բաժին ողալի առաջնորդութեամբ: Նո-

բա կանգ առան մուտքի մօտ և սկսեցին բան-  
կին տիրող հայերի հետ բանակցութեան մէջ  
մտնել: Երբ արատախան սպայի յորդորներին  
յուսամուտից քուրս ցցեց մի սև գանգրահեր  
գլխի և լժնդաց, շօր կարճատև ատրճանակի  
հարածը: Ձինուորներից մէկը զամ րցեց  
գետնին իւր հրացանը, կարծես մտախոհ մի  
կողմ շարժեց, այդտեղ կանգ առաւ, ձեռքերը  
մի տեսակ յիմար թափահարեց և ընկաւ գետ-  
նին: Նա մեռած էր: Փողոցի հակառակ կող-  
մից ևս լսեցին հրաձգութիւններ, ամբոխն  
իրար խառնեց. սպան հրաման տուց և որո-  
տացող հրացաններն ստիպեցին հայերին թար-  
նել բանկի խորքերում: Խաշաձի հրաձգու-  
թիւնն ստիպեց ստիկանութեանը հեռացնել  
ժողովրդին, բայց մի քիչ ժամանակից յետոյ,  
երբ ևս նորից կարողացայ հասնել բանկի շի-  
նութեանը, արդէն տեսայ թարգման Մարտի-  
մովի հաստ մարմինը, որը բանակցութիւններն  
առաջ էր տանում լիզափոխականների հետ,  
յուսամուտի միջով: Այդ բանակցութիւններն  
երկար տևեցին, մեծ ու երկարատև ընդմիջում-  
ներով և նոցա հետևանքն այն եղաւ, որ հա-  
յերի այդ խումբը մրտտած երեսներով, զին-

ւորներով շրջապատւած, հեռացան զէպի Ղա-  
լաթիտ: Հայերի օսմանեան բանկի վերայ յար-  
ձակելը մի տեսակ նշան եղաւ հայկական բա-  
ցարձակ կոտորածի: Կ.-Պոլիսը մի անգամից  
փոխեց իւր արտարին կերպարանքը. կենդա-  
նի, վաճառաշահ, շափագանց շարժուն, ար-  
տարուտ նայն իսկ անհող բազարը, յանկար՝  
գարձաւ մի տեսակ մուսյլ, խորհրդաւոր, ան-  
բացատրելի: Փողոցներում երևում էին այն-  
պիսի կերպարանքներ, որոնք առաջ երբէք  
չէին տեսնուել: Չատերի ձեռքում երևում էին  
սրեր ու ատրճանակներ: Լարւած, նեղորգա-  
յին ամբոխը վախենում էր արդէն ամեն բա-  
նից և յաճախ մի ոքիւ պատահական հրաձգու-  
թիւն ստիպում էր նորան զողջողալ և փախ-  
չել: Փողոցներում ձեզ սպասում էին բոլորո-  
վին անսպասելի ընծաներ, երբեմն ձեզ պա-  
տահում էր սպանւած ուստիկանը և մահտան-  
ջանքների մէջ թաւարւող այլանդակւած ձին,  
երբեմն կոկորդը կտրած հայը, սրի հանգած  
աչքերը յոգնած նայում էին երկիւրին: Այս բո-  
լոր գնդանութիւնները կտտարւում էին մի տե-  
սակ լուռ, առանց ազմուկի, բայց թուրքերին  
միայն յատուկ անգթութիւնը ժամէժամ բոր-

բարւում էր: Եւրոպացիները, կարծես ընտղբ-  
մամբ զգում էին այդ: Լիօնի բանկի շինու-  
թեան առաջ կանգնած էր խուռն ամբօխը,  
որոնցից իւրաքանչիւրը ձգտում էր առաջ անց-  
նել և պահ տալ իւր գրամագլուխը: Չատերը  
փախչում էին Եշխանի կզզիները և կամ գուրս  
եկող նաւերով գէպի Եւրոպա: Խանութները  
զբիթէ բոլորը փակ էին, և երբ, միանգամ,  
ես ուզում էի գուրս գալ Տիւրանոցից երկաց,  
որ նորա, գուրսը գրոխց փակւած էր և մեզ  
միայն երեկոյեան ազատեցին բանդարկութիւ-  
նից: Երբ ես Յերայ հասայ, ինձ այնպէս թւաց,  
թէ ես գտնւում եմ պատերազմի դաշտում:  
Ամեն կողմ թափթփւած էին դիակներ, կտրու-  
ւած կոկորդիներով, սպանւած կանայք և այլան-  
գակւած երեխաներ: Խուլ փողոցներում թուր-  
քական ամբօխը շարունակում էր ազմկել և  
երբեմն լոււմ էր մի ինչ որ ծանր և փափուկ  
բանի սալալատակին ընկնելը: Ինչպէս ես յե-  
տոյ իմացայ, այդ թուրքերն էին, որ բռնելով  
մի սրէէ հայի ստրերից ու ձեռքերից, թափ  
տալով ցած էին քցում շորթորդ կամ հինգե-  
բարդ յարկի պատշգամբից: Այտակ ու այնտեղ  
լոււմ էին մեռնողների հեծեծանքը, գոցանից

սմանք չգաձգւելն ճանկում էին կարկամած  
ձեռներով սալալատակը, իսկ մի քանիսն աղե-  
կաուր ձայնով խնդրում էին միայն մի բան—  
մահ կամ օգնութիւն: Կ.-Պօլսի ներքին մա-  
սում, Ղալաթիայում, սրտեղ ապրում է փա-  
զիշահի մայրաքաղաքի ամբողջ ստորին գտտա-  
կարգը կատարեցին աւելի մեծ անգլթութիւն-  
ներ. նկարագրել այդ ամենը չեմ կարող, որով-  
հետև գոցա յիշելիս արիւնս, բառի բուն նշա-  
նակութեամբ, սառչում է երակներս մէջ: Բա-  
ւական է այսքանն ասել, որ թուրքերը բուլ-  
ղարական գաղանութիւնների ժամանակ ունե-  
ցած կատարելութիւնից ու անգլթութիւնից  
չատ հեռու գնացին:

Հայերին հարիւրներով բանդարկում էին  
և ինձ յաջողեց ներս մտնել այդ բանդերից  
մէկը: Երբ ես վերադարձայ Ռուսաստան և  
աչրէ անցրի իմ բացակայութեան ժամանակ  
կուտակւած լրագրները, աչքերիս չհաւատացի  
կարգալով «НОВОЕ ВРЕМЯ»-ի մէջ պ. Մօլշա-  
նովի արած Կ.-Պօլսի բանդերի նկարագրու-  
թիւնը: Այդպէս գրելու համար կամ պէտք է  
թուրք լինել և կամ ամենեւին Կ.-Պօլսի բան-  
դերում չեղած, որովհետև գրանում իսկապէս

ամենափոքր նմանութիւն անգամ չկայ: Մօլշա-  
նովի խօսքերով, բանդերը շինւած են բոլորո-  
վին առողջապահական կանոններով և մինչև  
անգամ յարմար, այն ինչ իրականապէս թըշ-  
ւառ հայերին բանդարկում են նեց ու խեղդող  
խուղերում, այնպիսի քանակութեամբ, որ նո-  
քա բառի բուն նշանակութեամբ ստիպւած են  
ամբողջ ժամանակը կանգնած մնալ, սրովհետև  
ուզգակի մէկ հոգու նստելու տեղ անգամ չկայ.  
նոքա այն աստիճան սեղմւած էին, որ ներ-  
կայացնում էին մի տեսակ խտացած, մի ամ-  
բողջ զանգւած: Բոլորովին փակւած, առանց մի  
որևէ օդափոխութեան, նոցա ոչ մի բոպէ սե-  
նեակից դուրս չեն թողնում. նոքա շնչարգել-  
ւում էին օդի պակասութիւնից, իսկ վերջը  
նոցա դիակներից բարեր կապած բցում էին  
Վոսփորի յատակը: Իմ տեսած ստիպալի տե-  
սարաններից յատկապէս երկուսը գրոշմեղ են  
իմ յիշողութեան մէջ: Ես պատահմամբ տեսայ  
թէ ինչպէս գէպի նաւը ճանապարհ էին գնում  
հայ գաղթականներին. ոչ մի գրիչ չի կարող  
նկարագրել այդ թշւառների գէմրի արտայայ-  
տութիւնը, որոնց բաղաբաղական հանգամանք-  
ներն և գրութիւնը ոչ սրի չէր հետարբերում.

այն ինչ նոցա գրկում էին վերջին հացի կտո-  
րից և գրկթէ նոցանից իւրաքանչիւրն այդ  
սարսափների ընթացքում կորցրել էր իւր ըն-  
տանիքի անգամներից մէկն ու մէկին: Թշւառ,  
կիտարազցած, պարկերն ուտարին, փորքաթիւ  
զօրքի ուղեկցութեամբ նոքա շարժւում էին  
գէպի ափը, երբ յանկարծ, բոլորովին անսպա-  
սելի, դոցա նայող ամբոխը յուզեց: Ես տե-  
սայ թէ ինչպէս երկու երեք սովթաներ մոխ-  
րագոյն խալածներով արագ յայտնեցին և  
անյայտացան: Դորա հետեանքն այն եղաւ, որ  
տասը տամեհսինգ թուրքեր յարձակեցին գաղ-  
թականների վերայ և մի քանի բոպէի մէջ,  
մինչդեռ զինուորները ուշրի կգային, ամբոխը  
յայտնի կերպով նւազեց. իսկ այնտեղ, որտե-  
ղից նոքա անցան, ընկած էր անկարգ թափ-  
թփւած դիակների կոյտը: Ես պարզ տեսայ  
թէ ինչպէս մի թուրք փշրեց մի բարձրահա-  
սակ ձեր հայի գանգը, որի վերջին մերենա-  
յական շարժումն եղաւ ջարդած գլխի բռնելը:  
Ես ուզողով փախայ այդտեղից և միանգամ  
էլ յիտ գառնալով տեսայ թէ ինչպէս ամբոխը  
շարունակում էր ծաղրել գիակները: Բոլոր  
այն յիշողութիւնները, որոնցով մենք մեծա-

ցել ու անել ենք, շփոթուած և սրբուած էին մի ինչ որ լիբր տիրող ձեռքով, յանուն քաղաքական անյայտ նպատակների և խնդիրների: Մի ուրիշ անգամ—այդ կատարուեց Քամ-Քամու կոչուած ամարանոցում—ես տեսայ թէ ինչպէս մի խումբ թիւրգեր, երկաթէ գլուխներով ծանր փայտերը ձեռներին մի քանի բուպէի մէջ ջարդեցին հայ բեռնակիրների խումբը, որոնք մինչև անգամ շփուածեցին պաշտպանել, այլ միայն լուռ, գլուխները կախած սպասուած էին մահացու հարւածներին: Այդպիսի տեսարանները երկար ժամանակ չեն մոռացուած և գրականապէս այդ բուպէների բոլորովին չես հետաքրքրուած զանազան կարիներանների խնդիրներով և քաղաքագէտների եռանդուն նօտաներով, այլ միայն հարցնում ես թեզ, երբ պիտի վերջանան այս բոլորը:

Փոքր-ասիական ափով, Մալ—Թափայից մինչև Աֆիոն—Կարահիսար ձգւած է շորս հարկեր վերստ երկարութեամբ երկաթուղին,

որը կազմուած է Թիւրքիայի պործանքը և, որը նորա հպատակները միշտ օրինակ են բերում իբր քաղաքակրթութեան հետեկու նշան: Միջանկեալ պէտք է ասել, որ այդ երկաթուղին պահուած է մի ֆրանսիական ընկերութիւն, որն անխիղճ կերպով կեղերում է տեղական ժողովրդին և գնացքները շարժում են առանց մի սրել, կարգի: Այդ երկաթուղիով ես գնացի Անատոլիայի խորքը և այնտեղ էլ, գծի աջ ու ձախ կողմերում գտնուած փոքրիկ գիւղերում ու քաղաքներում ես տեսայ միևնոյն սարսափները, ինչ որ Գ.-Պօլսում: Յիշում եմ, մի գիւղում սրտեզ հարկաւոր էր կանգ առնել, ես տեսայ խաչուած քահանային և տիրացուին, որոնք պանդազ մեռել էին քառասունեութ ժամայ ընթացքում: Թշուառների սիրտ ճնշող հեծեմանքներն և միևնոյն ժամանակ, կատարեալ անկարողութիւնս, թեթեւացնելու նոցա տանջանքներն ստիպեցին ինձ բառի բուն նշանակութեամբ փախչել ստով այդ գիւղից. բայց և հեռեհալում ես հանգիպեցի ոչ պակաս սոսկալի տեսարանի: Մի տան առաջ, որի մէջ երեի տեղաւորուած էր պոլոցը կամ տպրում էր մի մեծ ընտանիք, ամբողջ ցանկապատը

ցցւած էր երեսօաների մարմիններով, որոնց մարմնիկները կծկւած մահւան ջղաձգութեամբ, խիտ դարւած էին հարաւային արեգակի ճառագայթների տակ: Թւեյ բոլոր տեսածներս ոչ մի հնարաւորութիւն չունիմ. բաւական է այսքանն ասել, որ վրէժէ մի ամուսյ ընթացքում ես չկարողացայ հանգիստ քնել, այն ատիճան լարւած էին նեարգերս, և չկարողացայ մտի վերայ նայել. որովհետեւ այդ յիշեցնում էր ինձ դժբաղդ հայերի յոշոտւած գիակները: Այն ինչ Կ.-Պօլսում անկարգութիւնները զեռ չէին վերջացել և իւրարանշիւր նրեկոյ կարելի էր տեսնել տամեակ սոսիւր լըլուած գիակներով, որոնք ուղղւում էին օսմանեան կայսրութեան գաղանխքների յաւիտենական աւանդապահը, գէպի Վասֆօրը:

## VI

Ակամայ հարց է ծագում, թէ ինչպէս էր վերաբերւում գէպի հայկական անկարգութիւնները թուրքական ինտելիգենցիան: Առաջինն,

ամենամօտիկ ընդհարումն ունեցաւ նորա հետ զինւորական տարրը և այդ պատճառով ես կասեմ մի բանի խօսք: Թուրք զինւորը մնում է միշտ նոյն թուրքը, և զինւորական համագլխատ հագնելով ամենեկին շի կորուսւմ ժողովրդից: Այդ պատճառով տարօրինակ կլինէր պահանջել նրանից վճռական միջոյցներ ուղղւած կարգապահութեան վերականգնման և այն էլ իւր համացեղների գէմ: Այստեղ անպատճառ պէտք է առաջ վար երկու ուղղութիւնների հակադրութիւն. կարգապահութիւնը ստիպւում է նրան կատարել իշխանութեան պահանջները և հրացան արձակել աւարառու թուրքերի վերայ, մինևոյն ժամանակ կրօնը պահանջում է բրիտանեաներին ոչնչացնել, և պէտք է խոստովանել, որ կարգապահութիւնը այս գէպում գերազանցեց, թէև թուրքական զօրքերի մէջ նա շի կարող համարել օրինակելի և սպաներքն ստիպւած են շատ աշխատանք գոքժ գնել, որպէսզի հասնեն մի որեւէ արդիւնքի: Առանց լըրւած հրացանի նա երբէր սիրտ չի անիլ ներս մտնել զօրանոցներն և նորա յարաբերութիւնը զինւորների հետ խիտ լարւած է: Ամեն բան ստեղծւում է պատիժների երկիւզի




հոգի վերայ և ոչ երբէք յարգանքի կամ վարկի: Գրեթէ ոչինչ շտանալով, սպաների մեծամասնութիւնը միջոցի տէր մարդիկ են, բայց քէֆերի անձնատուր չեն լինում և ժամանակն անցնում են ընտանեկան շրջանում: Ահա այդ զինուորական ինտելիգենցիայի շրջանը հայկական անկարգութիւններին նայում էր մի փոքր անբաւականութեամբ, տեսնելով նորա մէջ կամայականութիւն և սանձաբաժակութիւն: Ատոմանաւորների շրջանը վերաբերում էր բոլորովին անտարբեր, իսկ շատերը նոյն իսկ ուրախանում էին, որովհետեւ այդ ճանապարհով նորա ազատում էին ձանձրացնող պարտատէրներից, որը ամեն մի թուրք աստիճանաւոր ունի, որովհետեւ նա ռաճիկ երբեմն է ստանում, իսկ կաշառքները չեն օգտում նորա ապրուստին: Վերջապէս թուրքական մամուլը արդէն բոլորովին լուսթիւն էր պահում և նորան չի էլ կարելի համարել հասարակական կարծիքի արտայայտիչ: Պաշտօնական լրագրերը ոչ մի կշիռ չունին. նոցա մէջ դուր երբէք չէր գտնի յօդաւածներ, որոնց մէջ ցոյց տրւած լինեն կառավարութեան այս կամ այն հայեացքը օրւայ խնդրի մասին: Չոր ու ցամաք

փաստերի յիշատակութիւններ, մէկի դարու, զնալու, հրամանների արտատպումներ—ահա և բոլորը: Ոչ պաշտօնական լրագրերը բոլորն, սուաց բացառութեան, գտնւում են անգլիացիների ձեռքում և այդ պատճառով պարզ է, որ նոցա չի կարելի համարել Յ.-Գրան հասարակական կարծիքների թարգման: Այդ տեսակ լրագրի խմբագիրը բոլորովին յայտնի կերպով ծախում է իւր սխեմատիկները, առաջարկելով նոցա այնպիսիների ծառայութեանը, ում որ այդ անհրաժեշտ է: Այդ ճանապարհով են առաջ գնում նոյն այդ անգլիացի փողատէրերի դահալան վաճառականական ձեռնարկութիւնները: Այդ լրագրերի բովանդակութիւնն ազրատ է և յիշեցնում է մի տեսակ խուլ գաւառականները: Իւրարանշիւր հարցի բննագատութեան ժամանակ թուրքը միշտ վրդովւած հարցական հայեացքով գտնւում է դէպի Ելլըդ-Քեօսին սպասելով, թէ ինչ կասեն այնտեղ. բայց ամենաշատ գէպքերում Ելլըդ-Քեօսիլը համր է մնում օրւայ բոլոր հարցերի ժամանակ: Թիւրքիայի պետական մերենան չինւած է մի այնպիսի ձեռք, որ սուլթանն անձամբ խառնւում է բոլոր դործերին, որոնք նոյն իսկ

չունեն ոչ մի իրական նշանակութիւն: Վաղ առաւօտանից սկսած, երբ Վ--Պօլսի ծոյլ բնակիչները գեռ կս հանգիստ քնած են, սուլթանը արդէն լսում է սէկը միւսի յետնից զեկուցումներ և տալիս է վճիռներ: Թիւրքիայի ներքին քաղաքականութիւնը գտնուում է այնպիսի բարդ պայմաններում, որ յաճախ ամենահասարակ գործը փազիշահին քցում է դրժլարութեան մէջ, որովհետև դա կապ ունի կամ մի որևէ օտար հպատակի հետ, հետևաբար հարկաւոր է խորհրդակցել այդ պետութեան ներկայացուցչի հետ, կամ աւրինչութիւն ունի կրօնական հարցերի հետ, կամ վերջապէս նիւթական ծախսեր է պահանջում, որն այժմ Թուրքիան գրականապէս հնարաւորութիւն չունի անելու: Դորանից անկախ, քիչ չի խանգարում Սուլթանին նորա պալատում յանձնարարութիւնների ընդունւած ձեր, որոնք նա անում է իւր մօտիկ անձնաւորութիւններին ամենազանազանակերպ հարցերով: Այդ մարդկանց զեկուցումներն յաճախ քիչ են լուսաբանում տրւած հարցը և շհամապատասխանելով նորան, հակասում են այս կամ այն նախարարութեան ընդհանուր ուղղութեանը:

և հետևանքում ստացում է նոր թիւրքիայութիւն: Սուլթանի ահագին տերութիւնը, եթէ զիտներ նորան հետախոյզ աչքով, յայտնում է իբրև մի բոլորովին անգամալուծած փարմին. և այդ պատճառով, Թիւրքիայում մեծ բարենարսդումների սպասել, չնայելով նորատւած խոտումների, անկարելի է: Միևնոյն ժամանակ, սուլթանը բոլորովին հեռու է բնական կեանքից, որովհետև, ըստ նախնեաց սովորութեան, նա երբէք դուրս չի գալիս արբանիքից, և այդ պատճառով բաւականաճում է միայն նրանով ինչ որ նորան զեկուցանում են: Բնականից հիւանդոտ լինելով, նա չուտով յոգնում է, գործերը մնում են չվերջացրած, և Թիւրքիայի առանց այն էլ գտնուող մերենան գանգաղանում է աւելի ևս: Անկասկած, հայկական անկարգութիւնները վրդովեցին սուլթանին, բայց նա շափազանց մահմեդական է և չի կարող ուղղակի, յայտնի կերպով պաշտպանել հայերին, և, բացի գրանից, նա մահմեդականների կրօնապետն է, այնպէս որ այս կողմից ևս նա բացարձակ զսկւած է անկախ գործելու հնարաւորութիւնից:



Հառաւ դուքս գալու օրը: Ես արգէն վազուց ուզում էի թողնել Վ.Պօլիսը—չափազանց շատ սարսափներ էի կրել այդ ժամանակամիջոցում, նեարգերս սաստիկ բայրայել էին: Տոմսակ վերցնելով գէպի Սեաստապօլ ճանապարհուղ առաջին շողենաւի համար, ես մնաս բարեաւ ասացի վաղիշահի մայրաբազարին: Երևր երկարատև սուր շոցներ ստիպեցին փորրիկ մակոյկներին հեռանալ մեր շոգենաւից, որը փրփրացնելով, չփելով Վոսֆորի յտակ ջուրը շարժում էր գէպի Սեծովի մուտքը: Անվերջ պատկերները տարածում էին մեր առաջ, հարիւրաւոր աներ մտախոհ նայում էին հայելանման ջրի մէջ. վերջին անգամ փայլեց բանաստեղծական Բօլիւկ—Գէրլէն և մենք դուքս եկանք ծովը: Վերանորոգելով անցած լիշտուլթիւնները, խօսակցութիւններն երկու պատրիարքների, երկու նախարարների և ահագին բանակութեամբ մասնաւոր անհատների հետ, ահամայ մտրովս անցաւ, որ հայկական հարցն այն պատճառով երբէք չի ստանայ ցանկալի լուծումը, որով-

հետ նորա վերայ չեն նայում ուղղակի ինչպէս թոյլի վերայ տարածւած բռնութեան, այլ անպատճառ մտցնում են նորա մէջ բազարական տարր, դորձնելով նորան հէկց այդ բանով անվերջանալի: Հազիւ հարկաւոր լինի հարց դնել, ո՞վ է արգար, ո՞վ մեղաւոր, բայց այստեղ բաններորդ գարու ազատութեան միջոցին կատարում է վրդովոց բռնութիւն և ամբողջ ժողովուրդը, որը ունի իւր անցեալը, իւր բազաբակրթութիւնը, լեզուն, աստիճանաբար ջնջւում է: Ահեղայանի է, Թիւրքիան բոյորովին վերջացրել է իւր գարը, և ներկայանում է մի ինչ որ սարսափելի անախրօնիզմ մայր ցամաքի վերայ: Չեւր ձեւրի տւած առաջ զնայ կրօնական միւս պետութիւնների հետ նա չի կարող, որովհետև այդ բանին խանգարում է կրթական հաստատութիւնների բացակայութիւնն, և հետեւաբար նոր սերունդ պատրաստելու անկարողութիւնը, եօթը վար յետ տանող կրօնական պահանջներն և վերջապէս նիւթական միջոցների բացակայութիւնը: Այստեղ ամեն բան ենթարկւած է մի ինչ որ անձնական կամայականութեան և փողիշահի իւրաքանչիւր հպատակ չունի ոչ ընտանեկան

օջաղ, որովհետև դա չի կարող համարել հարէմը, ոչ մի հասարակական գործունէութեան ասպարէզ, որովհետև այդ չկայ և եթէ լինէր էլ նա դորա համար նախապատրաստւած չէ, ոչ թագաւորութիւն երոպական մտքով, որովհետև այդպիսին չի կարող համարել նիւթապէս և բարոյապէս անբառ Թիւրքիայի կիսաբայրալուծ կազմաւորը: Միւս կողմից չի կարելի չհամաձայնել այն բանի հետ, որ Թուրքերը ունին իրենց պատճառները չսիրելու հայերին: Իհարկէ, ոչ մի պատճառ չի կարող արդարացնել այն միջոցները, որոնցով Թուրքերն ազայուցանում են իրենց արդարացի լինելը, բայց և այնպէս հարկաւոր է աչքի առաջ ունենալ նոցա զարգացման ստոր չափը: Օտար Թիւրքիայի ընդհանուր ազգայնական կեանքին, բոլորովին անտարբեր նորա ապագային, հայերն իրենց արտադրութիւններով և վաճառականական ընդունակութիւններով ճշնշում են Թուրք ժողովրդին: Արդէն բաւական է, որ անգլիացիները դիմում են զանազան միջոցների հայերի հետ մրցելու. այդ ասպոց է, որ նորա ընդունում են դոցա մրցողներ. խիստ ամեն մարդ, որ ճանաչում է ընդ թէ

չառ Արևելքը, հեշտ կհասկանայ, թէ մրցել այնտեղ անգլիացիներին հետ սրբան գծւար է: Հայերը Թուրք ազգարնակութեան ոչ մի գասակարգից պաշտպանութիւն չեն գտնում:

Չառ անգամ էր պատահում ինձ լսել երկար ճառեր այն մասին թէ նուսաստանը մի տեսակ անճան է վերաբերում այդ հարցին, բայց այս դէպքում նա վարեց բոլորովին կանոնաւոր: Սպասողական բազարականութիւնը այսօր փճուեց հանտոսյի և մարկիզ Սայրդիւրի ճառերով:

Չողենաւր վաղուց արդէն սահում էր Սև ծովի ալիքների վրայով. փախչող ամպերը խոստանում էին մեզ ցնցումներ, և ընդհանուր սեղանատան մէջ արդէն լսում էին անհանգիստ խօսակցութիւններ այն մասին թէ ինչ պէտք է անել ծովային հիւանդութեամբ բռնուելու պէպքում: Վերաւարական խօսակցութիւններ, բողոքներ, ծովային հիւանդութիւն, ցնցումներ—այդ բոլորը իրական կեանք էր

իւր բոլոր մանր շահերով և անցկացրած սար-  
սափների տխուր յիշողութիւնները սկսում էին  
աւելի ու աւելի յեափն տեղ բռնել: Միւս առա-  
ւօտ մենք արդէն Սեաստապօլի առաջն էինք  
և անցեալն ինձ թւում էր մի ահուկի, ծանր  
տանջող ծրար:



Գ. Ե. Ր. Զ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0379006

61182

891.99

0-65